2022, ՀՈՒԼԻՍ Բ, ԹԻՎ 14 (610)

Էջմիածնի Հայրապետական

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հուլիսի 31-ին **ՀՄԸՄ-ի կենտրոնական վարչության անդամներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՄԸՄ-ի (Հայ մարմնակրթական ընդհանուր միություն) կենտրոնական վարչության անդամներին՝ գլխավորությամբ վարչության ատենապետ Վաչէ Նաջարյանի:

Տիար Նաջարյանը, Նորին Սրբությանը ներկայացնելով վարչության անդամներին, տեղեկություններ փոխանցեց Հայաստանում անցկացված համա-ՀՄԸՄ-ական 11-րդ մարզախաղերի ընթացքի մասին՝ ընդգծելով, որ Սփյուռքից շուրջ 645 հայ երիտասարդ մարզիկ է ժամանել հայրենիք՝ մարզախաղերին մասնակցելու:

Ողջունելով հյուրերի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց ՀՄԸՄ-ի կենտրոնական վարչությանը հայրենիքում նման նախաձեռնության իրականացման համար: Վեհափառ Հայրապետը նաեւ գոհունակություն հայտնեց այս տարի առաջին անգամ իրականացված «Հրաշք» մարզախաղերի առնչությամբ, որոնց մասնակցեցին մտավոր եւ ֆիզիկական խնդիրներ ունեցող շուրջ 200 երեխա ու պատանի:

Հայոց Հայրապետը կարեւոր նկատեց համահայկական մարզախաղերի անցկացումը, որով հնարավորություն է ընձեռվում հայորդիներին միմյանց ճանաչելու, խանդավառվելու, լավատեսության եւ հայրենասիրության ոգով լցվելու: Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց նաեւ Սփյուռքի հանրային կյանքի աշխուժացմանն ու զորացմանը միտված յուրաքանչյուր նախաձեռնություն:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Տ. Ղեւոնդ աբդ. Սաղաթելյանը, ազատվելով Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանի տեսչի պաշտոնից, ծառայության է կոչվել Իրաքի հայոց թեմում:

Տ. Ադամ քհն. Մովսիսյանը ծառայության է նշանակվել Իրաքի հայոց թեմում:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

ՕԳՈՍՏՈՍ

† Բարեկենդան Սուրբ Աստվածածնի պահոց — օգոստոսի 7

† Տոն Շողակաթի Սուրբ Էջմիածնի — օգոստոսի 13

† ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ — օգոստոսի 14

ՏՈՆ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Սկիզբը՝ թիվ 13

Պայծառակերպության խորհուրդը

Պայծառակերպության խորհրդի վերաբերյալ արժեքավոր բացատրություններ կան Ընդհանրական, այդ թվում՝ Հայոց Եկեղեցու հայրերի երկերում, ճառերում (Մովսես Սյունեցի), քարոզներում (Ս. Գրիգոր Տաթեւացի), Ավետարանի մեկնություններում (Եփրեմ Ասորի, Հովհան Ոսկեբերան, Ստեփանոս Սյունեցի, Սարգիս Կունդ, Իգնատիոս Սեւլեռնցի, Բարսեղ Մաշկեւորցի (միայն Թ 10–12 համարները), Հովհաննես Երզնկացի (Ծործորեցի), Ս. Գրիգոր Տաթեւացի, Մխիթար Սեբաստացի, Աբրահամ Կոստանդնուպոլսեցի), տաղերում (Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Ներսես Շնորհալի), գանձերում (Ս. Ներսես Շնորհալի): Պայծառակերպությունը քննվել է Ալեքսանդրյան դպրոցին բնորոշ այլաբանական եւ Անտիոքյան աստվածաբանական դպրոցին հատուկ տառացի եղանակներով:

«Փիլիպպեան Կեսարիայից» դուրս գալուց վեց կամ ութ օր հետո Հիսուսի՝ Իր աշակերտների հետ լեռը բարձրանալու դրվագն այլաբանորեն քննելիս Իգնատիոս Սեւլեռնցին ու Հովհաննես Երզնկացին վեց եւ ութ օրերը համեմատել են առաջին ու երկրորդ գալուստների հետ: Տառացի մեկնաբանման եղանակը կիրառած հայրերը, ինչպես օրինակ՝ Մխիթար Սեբաստացին, վեցը համարում են միջանկյալ օրեր Հիսուսի՝ աշակերտներին ուղղված հարցման՝ «Ո՞վ է մարդու Որդին» (Մատթ. ԺԷ 13, Մարկ. Թ 27, Ղուկ. Թ 18), եւ Պետրոսի դավանության (Մատթ. ԺԷ 16, Մարկ. Թ 29, Ղուկ. Թ 20), ինչպես նաեւ պայծառակերպության օրերի միջեւ, իսկ ութը՝ այդ երկու օրերը ներառյալ:

Պայծառակերպությանը երեք առաքյալների ներկայությունը բացատրվում է նաեւ նրանց՝ տասներկուսի մեջ առանձնաշնորհյալ լինելու հանգամանքով. նրանք միասին ներկա են եղել նաեւ Հայրոսի աղջկա հարությանը (Մարկ. Ե 35–42, Ղուկ. Ը 40–55), Գեթսեմանիի պարտեզում աղոթքին (Մատթ. ԻՁ 36–46, Մարկ. ԺԴ 32–42): Առաքելական եռյակի առանձնաշնորհյալ լինելը վկայում է նաեւ Պողոս առաքյալը գաղատացիներին ուղղված թղթում. «...Հակոբոսը, Կեփասը եւ Հովհաննեսը, որոնք սյուներն էին համարվում» (Գաղ. Բ 8): ➥ *էջ 2*



ՏՈՆ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

↩ էջ 1

Տասներկուսից երեքին ընտրելու կարեւոր պատճառ էր նաեւ այն, որ Հուդան արժանի չէր աստվածային տեսությանը, իսկ եթե Տերը տասնմեկին բարձրացներ եւ միայն Հուդային թողներ, ապա նրա մատնիչ լինելը հետագայում գուցե արդարացվեր (Սարգիս Կունդ, Հովհաննես Երզնկացի): Մարգարեներից Մովսեսի ու Եղիայի ներկայությունը կապվում է Հիսուսի փրկագործական առաքելությունը ողջերին (ի դեմս Եղիայի) եւ մահացածներին (ի դեմս Մովսեսի) վերաբերելու հետ: Մովսեսը՝ որպես օրենսդիր, իսկ Եղիան՝ իբրեւ օրենքի նախանձախնդիր, իրենց ներկայությամբ հավաստում էին, որ Հիսուս չի մերժում Հին օրենքը, այլ հավասարապես Տեր է Հին ու Նոր Ուխտերի:

Առաքյալների եւ մարգարեների ներկայությունը խորհրդանշում է Հին օրենքի լրումն ու Նորի սկիզբը: Ինչպես Հին Կտակարանում Քորեբ լեռան վրա Մովսեսին աստվածային տեսիլքով տրվեց Տասնաբանյան, այնպես եւ Թաբոր լեռան վրա աստվածային տեսությամբ Նոր օրենքը տրվեց Նոր Ուխտի սպասավորներին՝ առաքյալներին, եւ այդպիսով հաստատվեց նոր Եկեղեցու հիմքը:

Ըստ մեկնիչների՝ Հիսուս ցույց է տալիս իր աստվածությունը, որպեսզի երբ խաչի վրա չարչարվի, աշակերտները չմեղանչեն՝ մտածելով, որ եթե Աստված է եւ Աստծու Որդի, ապա ինչու է տանջանքներ կրում՝ իրեն ազատելու փոխարեն, այլ հասկանան, որ փառքն ի սկզբանե ուներ եւ ոչ թե չարչարանքների գնով ձեռք բերեց, իսկ չարչարանքները ոչ թե հարկադրաբար է կրում, այլ կամավոր՝ հանուն մարդկության մեղքից ազատագրման: Աստծու Որդին Իր փառքը ցույց է տալիս նաեւ, որ հալածանքների ժամանակ աշակերտները հիշեն, որ Տիրոջ անվամբ չարչարվողները նույնպես նման փառքի են արժանանալու:

Պայծառակերպությունն ամբողջացնում է նաեւ փրկագործության խորհուրդը. այն խորհրդանշում է Հիսուսի երկրորդ գալուստը (առաջին գալստյան կարապետի մասին Եսային (Է 14), իսկ երկրորդի՝ Մաղաքիան (Դ 4–5) է մարգարեացել): Առաջինը Սուրբ Ծննդյամբ իրագործվել է, իսկ երկրորդն սպասվում է: Պայծառակերպության ժամանակ հայտնվում է Եղիա մարգարեն, որը լինելու էր երկրորդ գալստյան նախակարապետը (Բարսեղ Շնորհալի, Հովհաննես Երզնկացի, Մխիթար Սեբաստացի):

Պայծառակերպության լեռը

Պայծառակերպությունը, իբրեւ Հին եւ Նոր օրենքները միավորող, առաջին ու երկրորդ գալուստները խորհրդանշող իրողություն, դիտարկվում է նաեւ որպես առաջին Եկեղեցու սկզբնավորում: Իբրեւ նշյալ իրողության հիմնավորում՝ մեկնիչները վկայաբերում են Պետրոսի՝ երեք տաղավար շինելու վերաբերյալ առաջարկը (Մատթ. ԺԷ 4, Մարկ. Թ 4, Ղուկ. Թ 33), որոնց տեղում հետագայում երեք եկեղեցի է կառուցվում (Հեղինե կայսրուհին լեռան վրա հիմնել է տաճար: Ը դարում այստեղ վանք է եղել, սակայն այսօր պահպանվել են միայն Հեղինեի հիմնած տաճարի բեկորները). ի դեմս երեք առաքյալների՝ Տերը հոգեղեն Եկեղեցի է հիմնարկում:

Մեսրոպ քհն. Արամյանը գրում է, որ ըստ Եկեղեցու հայրերի՝ պայծառակերպությունը մինչեւ Տիրոջ հարությունը բարձրագույն հայտնությունն է եւ իր մեջ խտացնում է մարդկային փրկաբանական անցյալը (Հին Կտակարան), ներկան (Նոր Կտակարան) եւ ապագան (երկրորդ գալուստ):

Եկեղեցական ավանդությունը վկայում է, որ Հիսուսի պայծառակերպությունը տեղի է ունեցել Թաբոր լեռան վրա: Եկեղեցու հայրերը հիշատակում են նաեւ Հերմոնը կամ որ նույնն է՝ Սիոնը (Սիոնը Հերմոն կոչված բարձրավանդակներից մեկն է, ուստի Սիոն կամ Հերմոն ասելով՝ չպետք է առանձին լեռներ հասկանալ), Սինան (նույն լեռնաշղթայի տարբեր ծայրերը կոչվում են Քորեբ եւ Սինա, սակայն այս երկու անվանումները երբեմն տրվում են ամբողջ լեռնաշղթային), այլաբանորեն հիշատակում են նաեւ դրախտը: Սակայն եկեղեցական մատենագրության մեջ առավելապես վկայակոչվում է Թաբոր լեռը:

Հարցը կարելի է դիտարկել ավանդութային, այլաբանական եւ աշխարհագրական տեսանկյուններից:

Դրախտ

Ըստ Հովհաննես Երզնկացու՝ «Լեառն բարձր ոմանք զդրախտն ասեն, քանզի բարձր է, քան զաշխարհ՝ հաւասար լուսնական գնդին եւ առանձին պատեալ քերօբէիւք եւ բոցեղէն սրով զատեալ ի հողեղինացս բնութենէ, որում եւ ես դաշնակից գոմ, քանզի յարութեան էր տեսիլն ապացոյց, եւ յարութիւնն ոչ այլ ինչ է, քան թէ առաջին փառացն կանգնումն, վասն անդ տարեալ եցոյց աշակերտացն զխորհուրդ յարութեան»:

Ս. Գրիգոր Տաթեւացին ընդգծում է, որ դրախտը խաչով բացվեց. «Նախ՝ զի խաչիւն բացաւ դրախտն աւազակին», ապա հավելում՝ «Եհան ի լեառն եւ եցոյց նոցա առանձինն եւ չքնաղատեսութիւն: Ցայս զարքայութիւն երկնից, զի չէին տեսեալ մարդիկ, յորմէ հետէ զրկեցաւ Ադամ: Վասն այն բարձր եւ առանձինն ասէ»: Այսինքն՝ «բարձր եւ առանձին է ասում», քանի որ այն համեմատվում է երկնքի արքայության՝ դրախտի հետ, որից մարդիկ Ադամի պատճառով զրկվել էին:

Թաբորը երկնային արքայության՝ Վերին Երուսաղեմի հետ է համեմատում ԺԱ դարի աստվածաբան Հովհաննես Կոզեռն Տարոնեցին. «....ի լեառն Թափովր, որ թարգմանի էջք հոգոյ եւ նախադուռն եւ նմանութիւն մաւրն մերոյ վերինն Երուսաղէմի....»:

Եղիշեն պայծառակերպությանը նվիրված ճառում գրում է, որ դրախտ կարող էր անվանվել Թաբոր լեռն իր եդեմական գեղեցկության համար. «Այն գալիլեացիների երկրում մի մեծ դաշտի մեջ է.... բարձր ու բոլորանիստ է, շուրջն ինքնաբուխ ջրհորներ, բազմաթիվ խիտ ու թավ անտառներ կան, որոնք անձրեւաբուխ ամպերի շնորհիվ պտղաբերում են.... Շավիղը, որով Տերն է բարձրացել, շիփ-շիտակ է, եւ այս ու այն կողմում ճանապարհ է հյուսված.... Լեռան կատարը հովտաձեւ գոգավորություն ունի»:

Հավանաբար Թաբորի՝ մյուս լեռներից անջատ լինելու պատճառով ավետարանիչները պայծառակերպության լեռան անունը չեն հայտնում, քանի որ հիշատակելով «բարձր եւ առանձին»՝ ինքնին հասկանալի է, որ խոսքը Թաբորի մասին է:

Բացի այդ, ըստ հիշատակությունների, առաջին քրիստոնյաներն են վկայում, որ պայծառակերպությունը տեղի է ունեցել Թաբոր լեռան վրա: Կղեմես Ալեքսանդրացին եւ Հերոնիմոսն այդ մասին ավանդություն են գտել: Ավանդությունը, անշուշտ, հաճախ անվիճելի է:

Հովհաննես Երզնկացին վկայակոչում է հասարակաց խոսքն ու մարգարեությունը. «Բայց հասարակաց բանն զԹաբօր ասէն, եւ վկայ առեալ զբան մարգարէին, թէ Թաբօր եւ Հերմօն յանուն քո ցնծասցեն: Ասէ եւ Պետրոս, թէ ունիմք հաստատագոյն զբանս մարգարէական, որում եթէ անսայցէք, բարւոք առնէք»:

Պետրոս առաքյալը, իր ընդհանրական Բ թղթում հիշատակելով Հիսուսի պայծառակերպությունը, լեռան անվանումը չի նշում, այլ այն սուրբ լեռ է որակում (Ա 14):

Բացի այդ՝ որպես հնագույն շրջանի եզակի գրավոր աղբյուր՝ Թաբորի մասին վկայում են պարականոն գրվածքները:

Թաբոր բառացիորեն նշանակում է լուսավորյալ, ընտրություն, մաքրություն, ինչը համընկնում է լեռան վրա տեղի ունեցած պայծառակերպության իրողությանը: Ասորերենով այն խորտակում կամ բեկում է նշանակում: Այս իմաստով դիտարկելով՝ կարելի է հասկանալ, որ Թաբորի վրա տեղի ունեցած պայծառակերպությունն իրապես բեկում էր մարդու համար, քանի որ նա արժանանում է դրախտային փառքի տեսությանը, որից զրկվել էր:

Այսպիսով՝ դրախտը որպես պայծառակերպության վայր դիտարկելն այլաբանորեն բացատրվում է Քրիստոսի պայծառակերպությամբ դրախտային կորուսյալ փառքի հայտնությամբ, իսկ բառացիորեն՝ Թաբորի գեղեցկությամբ: Պատահական չէ, որ մարգարեները եւս լեռները համեմատել են երկնային արքայության հետ. «Եւ տուն Աստուծոյ՝ ի վերայ գլխոց լերանց, եւ բարձրասցի ի վերայ բլրոց, եւ եկեսցեն ի նա ամենայն հեթանոսք» (Ես. Բ 2), կամ՝ «Եւ ոչ մեղիցեն եւ ոչ կարասցեն հարկանել զորք ի լերին՝ սրբութեան իմոյ» (Ես. ԺԱ 9):

Հերմոն (Սիոն) եւ Սինա լեռներն աշխարհագրորեն ավելի հեռու են գտնվում Գալիլիայից: Հերմոնը Գալիլիայից դեպի հյուսիս-արեւելք է ընկած: Այն ոչ միայն աշխարհագրորեն այլ վայրում է գտնվում, այլ նաեւ շատ բարձր է՝ բուսականությունից զուրկ եւ մշտապես ձյունածածկ, ինչն անհավանական է դարձնում Հիսուսի եւ Իր աշակերտների՝ այդ լեռը բարձրանալը:

Սինան, թեեւ բարեբեր է, ունի ջրի բազում ակունքներ, բուսական եւ կենդանական աշխարհ, սակայն այն նույնպես Գալիլիայից հեռու է ընկած՝ դեպի հարավարեւմուտք՝ Կարմիր ծովի եւ Աքայաբի ծոցի միջնամասում: Բացի այդ՝ Սինայի վերին մասն անկանոն շրջանակի ձեւ ունի՝ երեսուն կամ քառասուն մղոն տրամագծով:

Սինա լեռան վրա Մովսեսին տրվեց Հին օրենքը (Ելից ԺԴ 12–18): Հովհաննես Երզնկացին նշում է. «Իսկ կէսք զսինէականն ասէն անուանէ գագաթն, որ է բարձր եւ առանձինն, յորում զօրէնսն ընկալան, եւ երեսքն Մօսիսի պայծառացան, որ յայտնապէս զայսր պայծառութեան խորհուրդ նկարէր: Նաեւ յայնմ վայրի թաղեցաւ իսկ Մօսէս եւ անդր փախստական չոգաւ Հեղիաս, զորս կոչեաց դարձել եւ եցոյց զփառս աստուածութեանն»: Ինչպես Սինայի վրա Հին օրենքը տրվեց Մովսեսին, այնպես եւ Թաբորի վրա պայծառակերպությամբ Հին Ուխտի ներկայացուցիչների առջեւ Նոր օրենքը Տերը տվեց առաքյաներին, որոնք կոչված էին Նոր Ուխտի կրողներ եւ տարածողներ լինելու:

Սիոնի վրա հաստատվեց Դավթի ամրոցը. «Եւ առ Դաւիթ զՍիոն եւ զամրոց նորա. այն է քաղաք Դաւթի» (Բ Թագ. Ե 7, 9): Ըստ Հովհաննես Երզնկացու՝ «Իսկ ոմանք զՍիօն ասեն լեառն, յորում Դաւիթ զամրոցն շինեաց, զոր եւ Պետրոս ի սոյն տեսութեան պատմութեան՝ սուրբ լեառն անուանէ, թէ ընդ նմա իսկ էաք ի սուրբ լերինն: Ըստ Դաւթի՝ թէ հիմունք նորա ի լեառն սուրբ նորա, յորում հիմնարկելոց էր զխորհուրդ վերին Սիօնին»: Դավիթը Սիոնը բնորոշում է որպես Աստծու քաղաք (Սաղմ. ԽԷ): Հետագայում Սողոմոնը Երուսաղեմում, որտեղ գտնվում էր Սիոն լեռը (դրա համար քաղաքը հաճախ Սիոն էր կոչվում), կառուցում է Տիրոջ տաճարը (Գ Թագ. Ը 5–8): Այսինքն՝ ինչպես Սիոնի վրա Տիրոջ երկրավոր նախահայր Դավթի արքայական ամրոցն էր եւ Տիրոջ երկրային տաճարը, այնպես եւ Թաբորի վրա Հիսուսի երկնային արքայության օրինակն էր եւ Եկեղեցու նախօրինակը:

Այսպիսով՝ այս երկու լեռները եւս պայծառակերպության հետ խորհրդաբանորեն են կապվում. Սինան՝ որպես Հին օրենքի, իսկ Թաբորը՝ իբրեւ Նոր օրենքի տվչության վայր, Հերմոնը՝ որպես Դավիթ արքայի ամրոց եւ սողոմոնաշեն տաճարի վայր: Թաբոր լեռան մասին են վկայակոչում՝ ա. մարգարեական խոսքը՝ «Թաբոր եւ Հերմոն յանուն քո ցնծասցեն» (Սաղմ. ՁԸ 13), բ. Սրբազան ավանդությունը, գ. պարականոն գրականությունը, դ. անվան ստուգաբանությունը, ե. լեռան նկարագրությունը: Հիշատակված մյուս լեռները՝ Հերմոնը (Սիոն), Սինան, ինչպես նաեւ դրախտը պայծառակերպության հետ խորհրդաբանորեն են կապվում:

Պայծառակերպությունն ամբողջացնում եւ իր լրումին է հասցնում փրկագործության խորհուրդը՝ այլաբանորեն ներկայացնելով կորուսյալ դրախտից մինչեւ երկրորդ գալուստը:

Հասմիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Ս. Ներսես Շնորհալու ստեղծագործությունների մանկավարժական բնույթը

«Վիպասանութիւն» պոեմը՝ որպես հայ ժողովրդի պատմության դասագիրք

Սկիզբը՝ թիվ 9–13

«Վիպասանութիւն» ստեղծագործությունը ճիշտ հասկանալու եւ վերլուծելու համար անհրաժեշտ է որոշակի պատկերացում ունենալ Ս. Ներսես Շնորհալու կյանքի եւ ապրած պատմական ժամանակաշրջանի մասին: Առհասարակ ուսուցման գործընթացն առավել բարձր արդյունավետություն կարող է ունենալ, եթե իրականացվում է ոչ թե մեկ, այլ մի քանի մեթոդների համադրմամբ: Միաժամանակ շատ կարեւոր է նյութին համապատասխան ճիշտ գործիքակազմի եւ միջոցների ընտրությունը: Ս. Ներսես Շնորհալու կենսագրությունը, ժամանակաշրջանի բնութագիրը կարելի է ներկայացնել «դասախոսություն» մեթոդի միջոցով: Պատմական անդրադարձը տալիս է նաեւ միջառարկայական (Հայոց պատմություն, համաշխարհային պատմություն, Հայ Եկեղեցու պատմություն) կապեր ստեղծելու հնարավորություն: Տեխնոլոգիական հագեցվածության մեր դարաշրջանում դժվար է աշակերտի համար դասը հետաքրքիր դարձնել միայն ավանդական մոտեցումների եւ միջոցների կիրառմամբ: Ուսուցիչը, բանավոր խոսքին զուգահեռ, կարող է դիմել «տեսամեթոդի» կիրառմանը: Խոսքի եւ պատկերի զուգակցման դեպքում տեղեկության ծավալի ընկալումն առավել մեծ է լինում: Աշակերտներին կարող են ցուցադրվել Ս. Ներսես Շնորհալու, նրա ստեղծագործությունների ձեռագիր եւ տարբեր տարիների տպագիր տարբերակների, Կիլիկյան Հայաստանի նշանավոր վայրերի լուսանկարները:

Ս. Ներսես Շնորհալին իր պոեմը գրելիս հիմնականում օգտվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն»-ից, ինչին աշակերտներն արդեն իսկ ծանոթ են: «Վիպասանութիւն» ստեղծագործության ուսուցումն սկսելուց առաջ կարելի է կիրառել «մտագրոհ» մեթոդը՝ Մովսես Խորենացու «Պատմութեան» եւ դրա առանցքային դրվագների վերհիշման նպատակով: Սա խմբային աշխատանքի պարզագույն, բայց արդյունավետ եւ դյուրին կիրառելի մեթոդներից է: Ուսուցիչը գրատախտակին գրում է «Մովսես Խորենացի. Հայոց պատմություն», որից հետո աշակերտներն անցնում են առանցքային հասկացությանն առնչվող բառերի, բառակապակցությունների կամ մտքերի թվարկմանը: Մեթոդն արդյունավետ է կիրառել դասի խթանման փուլում, ինչի շնորհիվ ուսուցիչը հստակ պատկերացում կկազմի աշակերտի մնացորդային գիտելիքների մասին, անհրաժեշտության դեպքում նոր նյութի հաղորդումը կիրականացնի այդ գիտելիքների լրացմամբ կամ ճշգրտմամբ:

Բուն նյութի ներկայացման՝ իմաստավորման փուլում նպատակահարմար է աշակերտներին «Վիպասանութիւն» պոեմին ծանոթացնել «զրույցի» միջոցով: Մովսես Խորենացու մասին գիտելիքները եւ խթանման փուլում անդրադարձը հնարավորություն կտան ուսուցչին այս մեթոդին դիմելու: Ուսուցիչը կներկայացնի ստեղծագործության տեսակը, գրության նպատակները, դիպաշարը (սյուժե) ու կերպարները: Ստեղծագործության վերլուծության ընթացքում տարբեր հարցեր առաջադրելով՝ ուսուցիչը տեսանելի կդարձնի Մովսես Խորենացու ավանդները, աշակերտներին կմղի ինքնուրույն դատողությունների, եզրահանգումների եւ ընդհանրացումների: Պոեմի կառուցվածքն ու դիպաշարը ուսուցչի հետ միասին քննելով՝ աշակերտներն առավել լավ կընկալեն Ս. Ներսես Շնորհալու գլխավոր դասը՝ հայրենասիրությունը:

Դասը կարելի է ամփոփել (կշռադատման փուլ) ամրապնդող հարցերի օգնությամբ.

1. Ի՞նչ նպատակ է հետապնդել Ս. Ներսես Շնորհալին «Վիպասանութիւն» ստեղծագործության գրությամբ:

2. Ի՞նչ աղբյուրներից է օգտվել Ս. Ներսես Շնորհալին:

3. Որո՞նք են պոեմի առանցքային կերպարները:

4 Ո՞րն է ստեղծագործության գլխավոր դասը:

Անհրաժեշտ է նշել, որ «Վիպասանութիւն» պոեմի ուսուցումը դպրոցում կարող է հարուցել որոշ դժվարություններ, քանի որ այն փոխադրված չէ աշխարհաբարի: Սա անհնար է դարձնում բնագրային հատվածների ընթերցումը, ինչն իր հերթին լուրջ խոչընդոտ է ստեղծագործության ուսուցման գործընթացում:



Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ
ԵՊՀ-ի աստվածաբանության ֆակուլտետի ասպիրանտ,
ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետի մագիստրոս

Ռաֆֆու «Դավիթ Բեկ» պատմավեպը

Սկիզբը՝ թիվ 11–13

Խոսում են. «— Մի մարդով ոչինչ չի դառնա: — Այդ մի մարդը կդառնա հարյուր, իսկ հարյուրը՝ հազարներ» (էջ 249): Եվ ահա այդ *մեկ մարդը*՝ Դավիթ Բեկը, քառասուն քաջերի՝ իր զինավառ խմբով ոտքի է ելել եւ դիվանագիտորեն պատրաստ, Մեծ Սյունիքի եւ Փոքր Սյունիքի (Ղարաբաղ կամ Արցախ) գավառներում տիրող իրավիճակին ծանոթ, մելիքների քաղաքական կողմնորոշումներին տեղյակ՝ սկսում է իր ռազմական գործողությունները: Կենտրոնը Տաթեւն էր: Նրանց աջակցում էին նաեւ հոգեւոր հայրերը՝ Տաթեւի վանահայր, Սյունյաց աշխարհի հոգեւոր առաջնորդ՝ Ներսես արքեպիսկոպոսը, Մովսես եպիսկոպոսը, հայր Խորենը, որոնք եւ զենք են տեղափոխում, եւ ազատագրական ոգի հրահրում ստրկության դատապարտված ժողովրդի մեջ, ուժ ու կորով ներշնչում:

Առանձին դրվագներով ներկայացվում է մելիքությունների, գավառական կենտրոնների, առանձին բնակավայրերի ազատագրումը: Առաջին հաջողությունը Ուչ-Թեփեի կարաչոռլուների ցեղին փախուստի մատնելն էր եւ ունեցվածքը գրավելը: Շինուհայրն ապստամբների կողմն է անցնում առանց կռվի, իսկ տեղի հայերը միանում են Բեկի խմբին: Հաջորդը պարսիկների ջվանշիր ցեղն էր, որ 16 000 աշխարհազորով գալիս է նրա դեմ եւ երկու օր ու գիշեր տեւած կռիվներից հետո ջախջախվում: Կոտորվում են նաեւ ջվանշիրներին օգնության եկած պարսկական Կուրթլար ավանի բնակիչները:

Դավիթ Բեկի սարսափը տարածվում է, իսկ դրան բնականորեն նպաստում են ռազմական հաջողությունները եւ պատերազմական իրավիճակով պայմանավորված խստությունները: Սարսափը ռազմական գործողություններից առաջ է ընկնում եւ նախապատրաստում հաջողությունը:

Ազատագրական մեծ շարժմանը մասնակցում են հանրության բոլոր դասերը՝ հոգեւորականներ, շինականներ, կանայք...

Հոգեւորականների մասնակցությունը հրաշալի է Վարդանանց տոնի դրվագում. Ներսես արքեպիսկոպոսը պատարագ է մատուցում, քարոզ կարդում, աղոթք անում եւ ոգեկոչում ազգի հերոս սուրբ Վարդանին: Եկեղեցին իր ունեցվածքից թանկարժեք սկիհներ ու անոթներ է նվիրում ձեւավորվող բանակին, այսինքն՝ ազատագրական գործին մասնակցում է թե՛ ոգեպես, թե՛ նյութապես, թե՛ գաղափարապես: Նաեւ այսպես է շարունակվում հաղթական պատերազմը:



Ընդհանուր ոգեւորության խանդավառությամբ գործողության մեջ են մտնում նաեւ հայոց աշխարհի փափկասուն տիկնայք՝ իրենց ոսկեղեն զարդերի նվիրատվությամբ, քաջությամբ, անելանելի վիճակներից ելք գտնելու հնարամտությամբ: Եվ, ընդհանրապես, Ռաֆֆին շատ ուշադիր է կանանց կերպարների հարցում: Ըստ էության՝ «Դավիթ Բեկ»-ը տղամարդկանց վեպ է, բայց եւ անպակաս են կանայք, որոնց հետ ոչ միայն սերն է թեւածում, այլ նաեւ խելքն ու հերոսությունը: Կանանց կերպարները թե՛ այս վեպում եւ թե՛ ընդհանրապես Ռաֆֆու վիպագրության մեջ առանձին խոսակցության նյութ են:

Վարդանանց տոնի արարողության ժամանակ բերում են գերի ընկած մելիք Դավիթ Ուրացողին, որն ամեն ինչ անում էր Դավիթ Բեկի գործունեությունը խափանելու համար: Նրան աջակից էին պարսիկ կնոջից ծնված որդին՝ Շահ-Կուլի անունով, եւ Ֆաթալի խանի զորաջոկատը: Եվ հորը, եւ որդուն դավաճանի անպատիվ մահ է սպասում: Ուրացողից թալանված մի կին երկաթե գամը դնում է Շահ-Կուլիի գլխին եւ օթակով այնպես զարկում, որ մեխը մտնում է գլխի մեջ:

Զարմանք է հարուցում Դավիթ Ուրացողը, որը բարոյապես այնքան էր ընկել, որ պարսից լուծը գերադասում էր անկախ հայ պետականությունից: Ժողովուրդը որքան էլ նման լինի փափուկ մոմի, ճիշտ ղեկավարության դեպքում կարող է

դառնալ ահռելի ուժ, եւ հիմա այդ ուժի առջեւ ժողովրդին փչացնող ու բարոյալքող Ուրացողն է: Որպես մահապարտ՝ նրան թարս նստեցնում են մի սեւ ավանակի վրա, սանձի փոխարեն ձեռքը տալիս ավանակի պոչը եւ քշում հրապարակ, ուր դահիճն իր գործն է անում եւ կտրված գլուխը ցցում նիզակի ծայրին ու ժողովրդի ցնծության ներքո օդ հանում: Ուրացողին գլխատելուց հետո Սատանի կամրջից Որոտան գետն է թափվում նաեւ նրա ամբողջ պիղծ ազգուտակը: Այո՛, դավաճանները պիտի պատժվեն, թշնամին պետք է ոչնչացվի, սա է պատերազմի օրենքը: Հակառակ դեպքում տեղերը փոխվում են:

Ռաֆֆին մեկ անգամ չէ, որ խիստ խոսքեր է ասում թշնամիների ճնշումից խեղճության ու ստրկության դատապարտված, ազատության մասին չմտածող եւ ազգային ինքնությունը կորցրած իր ժողովրդի մասին: Այստեղ սրբազանի հետ զրուցելիս խոսքը տալիս է Բայինդուր իշխանին. «Աստված է վկա, այդ ժողովուրդը մորթելու է արժանի»: Ազգին համեմատում է անբարոյական կնոջ հետ եւ շարունակում. «Մեր ազգը մի այսպիսի անբարոյական կին է. նա մի մեծ պոռնիկ է, նրա երեսին ամոթի եւ պատվի մի կաթիլ անգամ չէ մնացել: Մոտ չորս հազար տարի նա պոռնկություն է անում, բայց տակավին չկշտացավ, չհագեցավ օտարներից: Ասորեստանցին դարերով գործ դրեց նրա վրա իր անբարոյական կրքերը: Հազարավոր տարիներ անցկացրեց նա՝ երբեմն հույնի, երբեմն պարսիկի, երբեմն հռոմեացու գիրկն ընկնելով: Մինչեւ անգամ անապատի արաբը իր հաստ շուրթերով շոշափեց նրա երեսը: Մինչեւ անգամ Թուրանի տափակաքիթ, դեղնակաշի մոնղոլը դարերով պառկեց նրա հետ» (էջ 288): Անարգված կնոջ հետ այս համեմատությունից հետո նա դեռ շարունակում է՝ միեւնույն է, ես սիրում եմ այդ կնոջը. «Սիրում եմ ատելով, սիրում եմ զզվելով... բայց սիրում եմ» (էջ 288):

Սիրուց, բայց նաեւ խաբված սիրուց բխած այդ ատելությունն էլ հանուն նույն սիրո էր, եւ պատահական չէ, որ հայրենիքի փրկության առաջին գրավականը, անձնազոհ անհատի հետ մեկտեղ, Ռաֆֆին համարում է ազգային սերը: Ինչո՞ւ է Ռաֆֆին հայոց պարտությունների պատմությունը նմանեցնում անառակ կնոջ ընկած վարքին՝ մի օր սրա հետ, մի օր՝ նրա: Այդպե՛ս, որովհետեւ հաղթանակի հուշարձաններն էլ են կերտվում կնոջ կերպարով՝ որպես Մայր հայրենիք: Կնոջ արժանապատվությունն արդեն իսկ հաղթող երկրի խորհրդանշան է. նշանակում է՝ տղամարդու իր պատիվը գետնով չի տվել:

Բնակավայրերի ազատագրման խանդավառ տարերքը շարունակվում է: Ծավալով ամենից շատ էջեր են հատկացված Զեյթուն բերդի գրավմանը (Զեյվա, Գեղի, գտնվում է Կապանում, չպետք է շփոթել Զեյվա ամրոցի հետ, որը Գյուլիստանում է): Այս գլխում առավելագույն նրբությամբ է փայլատակում Ռաֆֆու ռազմագիտական, ռազմավարական ու մարտավարական տարերքը: Զեյթուի առումը մահացու հարված էր թուրքերին, որովհետեւ Հայաստանում ոչ միայն պարսիկներն էին, այլեւ թուրքերը:

Ինչպես բերդի պաշարումը, այնպես եւ գրավումը երեւակայության հնարամիտ դրսեւորումների մի շատ հետաքրքրական ցանց են հյուսում: ➥ *էջ 5*

Մ. ԱՆՏՈՆԻ ՍՈՒՐՈԺՍԿԻ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԲԵՐԿՐԱՆՔԸ

1983 թվականի Սուրբ Ծննդյան պահքի զրույցներից



Սկիզբը՝ թիվ 13

«Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. ժե 13): Պողոս առաքյալը, խոսելով Քրիստոսի մասին, գրում է, որ հազիվ թե մեկը պատրաստ լինի մեռնելու իր ընկերոջ համար, իսկ Քրիստոս մեռավ մեզ համար այն դեպքում, երբ մենք թշնամի, օտար էինք Նրան: Քրիստոս մեռավ ո՛չ միայն նրանց համար, ովքեր ճանաչեցին Իրեն եւ դարձան Իր աշակերտները, այլ նաեւ նրանց, ովքեր դատեցին Իրեն անօրեն դատաստանով, եւ խաչին գամված՝ աղոթեց Իրեն խաչողների համար. «Ների՛ր նրանց, Հա՛յր, քանի որ չգիտեն, թե ինչ են անում»: Եվ ահա յուրաքանչյուրս միշտ պետք է խորհենք այս հարցի շուրջ՝ «Արդյոք ես քրիստոնյա՞ եմ: Որեւէ մեկը կարո՞ղ է իմ միջոցով ճանաչել Քրիստոսին, զգալ իմ սրտում Նրա սիրո առկայությունը: Որեւէ մեկը կարո՞ղ է իմ խոսքերում եւ մտքում գտնել աստվածային իմաստությունն ու ճշմարտությունը, իմ արարքներում (թե ինչպես եմ ես վերաբերվում կյանքին, մարդուն եւ Աստծուն) տեսնել աստվածային ճանապարհը»:

Պողոս առաքյալն ասում է, որ կգա մահը, իսկ մահից հետո՝ դատաստանը: Այո՛.... Ամենքիս ընդառաջ կգա մահը, եւ մեզանից յուրաքանչյուրը վաղ թե ուշ (մեզ համար անիմանալի է, թե երբ) կկանգնի Աստծու դատաստանի առջեւ: Եվ Քրիստոս խիստ խոսքեր կարտաբերի: Դատաստանն անողորմ կլինի նրանց համար, ովքեր չեն եղել ողորմած, այլ՝ անգութ, անսիրտ ու անսեր: Ո՛չ թե այն պատճառով, որ Աստված էլ այնպես «անգութ» եւ «անսեր» է, ինչպես մենք, այլ որովհետեւ փրկությունն աստվածային սիրո անդադար հոսքն է, սիրով միացումը սիրուն: Իսկ եթե մեր մեջ չկա այդ սերը, եթե չունենք սիրելու, անկեղծ լինելու ունակություն, մեր սրտում չունենք սիրո ծարավը, ապա անկարող ենք միանալ աստվածային սիրուն: Եվ մենք, ինչպես նշում է Դոստոեւսկին, հանկարծ կհայտնաբերենք, որ սերն է եղել մեր կյանքի միակ իմաստը, իսկ մենք ամբողջապես իմաստազրկել ենք մեր կյանքը եւ անկարող կլինենք անգամ ընդունել այն իմաստը, որն Աստված կարող է շնորհել մեզ:

Աստվածային դատաստանն այն չէ, որ Աստված մտաբերի մեր գործած բարիքները կամ արժեւորի հավատին առնչվող գործերում մեր «վարպետությունը»: Խորհենք ավետարանական այն դրվագի շուրջ, որը նախորդում է Մեծ պահքին. [մտաբերեք] Քրիստոսի առակը ոչխարների եւ այծերի մասին: Այնտեղ առաջադրված բոլոր հարցերը հանգում են հետեւյալին. երբ դու ապրում էիր երկրի վրա, քո սիրտը կա՞ծր էր որպես քար, թե՞ կենսունակ: Դու կերակրե՞լ ես քաղցածին: Ջերմացրե՞լ ես նրան, ով մրսում էր: Հագցրե՞լ ես մերկին: Այցելե՞լ ես բանտարկվածին ու լքյալին: Խիղճ ունեցե՞լ ես արդյոք, թե՞ միայն անտարբերությունը, ամբարտավանությունն ու ինքնահավանությունն են բնակվել քո [հոգում], ինչպես այն հարուստի [հոգում], որը խնջույքի էր այն ժամանակ, երբ իր տան շեմին սովից ու ցրտից մահանում էր Ղազարոսը: Սա միակ հարցն է, որ պիտի տրվի քեզ. «Դու ունեցե՞լ ես մարդկային սիրտ, թե՞ սրտի փոխարեն քար է եղել կրծքիդ տակ»: Եթե ունեցել ես մարդկային սեր, ապա այն կարող է ծաղկել աստվածային սիրով, իսկ եթե չի եղել [այդ սերը], ապա ինչպե՞ս պետք է միանաս Աստծու սիրուն:

Եվ պետք չէ փախչել այդ դատաստանից՝ ասելով. «Ես սիրո՛ւմ եմ մարդկանց....»: Բոլոր մարդկանց, որոնք հեռու են մեզանից, մենք սիրում ենք: Գրողներից մեկն այսպես է բնութագրում իր հերոսին. «Այդ մարդն այնպես էր սիրում մարդկությանը, որ ատում էր այն մարդուն, որը լիովին միայնակ էր, քանի որ վերջինս ապականում էր մարդկության՝ իր աչքերում առկա կատարյալ պատկերը»: Անիրական, գոյություն չունեցող մարդկությանը, այո՛, սիրում էր նա, բայց որոշակի մարդուն կամ մարդկության խմբին նա ատում էր: Իրական մարդկանց նա այլանդակություն էր համարում, իսկ ինքը երազում էր այն գեղեցկության մասին, որը չէր եղել, չկար ու երբեք չէր էլ լինի՝ մինչեւ երկրորդ գալուստը: Մարդկանց նկատմամբ մեր սերն արդյո՞ք այդպիսին չէ: Մենք սիրում ենք շատ քչերին, բայց անգամ նրա՞նց չենք կարողանում սիրել առանց հետին մտքի, առանց պայմանների: Մենք վիճում ենք միմյանց հետ, անտարբեր դառնում միմյանց նկատմամբ ու երես թեքում իրարից.... Պողոս առաքյալն ասում է. «Մեկդ մյուսի դժվարությունները կրե՛ք ձեզ վրա, եւ այդպիսով դուք կկատարեք Քրիստոսի կամքը»: Այդ դժվարությունները ոչ միայն զրկանքներն են, այլ որեւէ մեկի վրա ծանրացած ամբողջ բեռը: Կարող ենք որոշ ժամանակ կարեկից լինել օտարի վշտին, կրել ոչ երկարատեւ հիվանդության, կարճատեւ վեճերի դժվարությունները, բայց ի՞նչ սարսափելի է տեսնելը, որ մարդու վիշտն անմխիթարելի է, հիվանդությունը չի նահանջում, չի վերանում չքավորությունը. կարճ ժամանակ անց (որից առաջ խղճում էինք այդ մարդուն, շրջապատում նրան ուշադրությամբ, հոգ տանում նրա մասին) դառնում ենք անտարբեր նրա նկատմամբ. «Մի՞թե չեն վերանալու նրա հիվանդությունը, կարիքն ու վիշտը: Արդեն եկել է նրա առողջանալու, սթափվելու, արթնանալու ժամանակը: Եվ մի՞թե իմ ողջ կյանքում նրան պետք է խնամեմ....»: Աստված, սակայն, այդպես չի վերաբերվում մեզ: Քանի դեռ մենք ապրում ենք, տասնամյակներ շարունակ Նա համբերում, սպասում, հույս է փայփայում: Նա մշտապես մեր կյանքի ողջ ընթացքում անձանձրույթ փորձում է օգնել մեզ: Դժբախտությունն այն չէ, որ մենք շատերին չենք սիրում կամ ունակ չենք սիրելու բոլորին, եւ մեր սիրտը փոքր-ինչ նեղ է (ինչպես Պողոս առաքյալն է ասում՝ «.... նեղվածք է ձեր սրտերում....»): Դժբախտությունն այն է, որ մենք այնքան ոչ ճիշտ, անհամբերատար, կոպիտ ու անմիտ սիրով ենք սիրում անգամ նրանց, ում մասին ասում ենք, թե թանկ են մեզ համար: Որքա՞ն է անհրաժեշտ խորհել նրանց մասին, ովքեր շրջապատում են մեզ, եւ հարցնել ինքներս մեզ. «Ինչպիսի՞ սիրով եմ սիրում նրանց. երջանկորո՞ն, թե՞ դժվարությամբ»: Չէ՞ որ կարող է պատահել եւ այնպես, որ մեր սերը ճնշի դիմացինին եւ նրա համար ո՛չ թե ազատություն, այլ ստրկություն լինի: Մարդուն ճնշում է այն զգացմունքը, որը մենք «սեր» ենք կոչում, քանի որ մենք կարծես իրենից լավ գիտենք, թե որն է նրա երջանկությունը, ինչ է նրան հարկավոր, որտեղ է նրա ուրախությունը. մենք խլում ենք նրանից ազատության, ստեղծագործելու ողջ բերկրանքը, չէ՞ որ ինքներս ենք կամենում կառավարել նրա կյանքն այնպես, որ նրա համար «ավելի լավ» լինի: Երբ խորհում ենք ապաշխարության մասին, միշտ պատկերացնում ենք մուգ կամ մոխրագույն մի պատկեր, վիշտ, դառնացած սիրտ, արցունքներ, ինչ-որ անխուսափելի տրտմություն մեզ ու մեզ պատկանող կյանքի համար, այն բանի համար, որ մեր անցյալն այդքան մութ ու անվայելուչ է եղել, անվայելուչ՝ Աստծու առջեւ: ➥ *էջ 5*

Հայաստանը պետք է խոսի...

Վերջ էր 20-րդ դարասկզբի հայ երկու մեծագույն անհատների՝ Հովհաննես Թումանյանի եւ Զորավար Անդրանիկի համագործակցությունը հայրենիքի համար վտանգավոր մի ժամանակահատվածում: Իրենց ուսերին առնելով վիթխարի պատասխանատվություն՝ նրանք հանդես եկան ժողովրդին համախմբելու եւ վտանգված հայրենիքը պաշտպանելու նվիրական առաքելությամբ:

Հայոց պատմության բախտորոշ դարաշրջանը՝ 20-րդ դարի սկիզբը (1900-ից 1920 թվականն ընկած ժամանակահատվածը), լեցուն է ինչպես խիզախ ու հերոսական, այնպես եւ չարաբաստիկ ու ողբերգական բազում իրադարձություններով: Թվում է, թե այդ ժամանակահատվածն էր անկյունաքարայինն ու շրջադարձայինը, եւ մեր ժողովուրդը պետք է տեր դառնար իր բախտին՝ ազատությանն ու պետականությանը, կամ կորչեր ու կործանվեր աշխարհավեր եւ արյունալից իրադարձությունների հորձանուտում:

Բարեբախտություն է, որ այդ վճռորոշ դարաշրջանում հայ հասարակական-քաղաքական (եւ ոչ միայն) մտքի ասպարեզում կողք կողքի եւ ձեռք ձեռքի տված գործել են այնպիսի մեծանուն ու փառահեղ անհատներ, որպիսիք են Հովհաննես Թումանյանն ու Զորավար Անդրանիկը:

Այո՛, ամենայն հայոց բանաստեղծն ու ամենայն հայոց զորավարը միասնական, անհատնում ջանքերի գնով փորձել են փրկել ավերակվող հայրենիքը եւ ցեղասպանությունից մազապուրծ եղած ժողովրդի վերջին բեկորները:

Ճշմարտություն է, որ Անդրանիկը, սրի հերոս ու ռազմի հերոս լինելուց զատ եւ այդ ամենին զուգահեռ, նաեւ խոսքի եւ ոգու մարդ էր, գրի եւ գրչության, մշակույթի մեծ նվիրյալ ու հովանավոր: Հայ ժողովրդին պատուհասած ճակատագրական փորձությունները շարունակվում էին նաեւ 1917 ու 1918 թվականներին: Այո՛, հայությունն ու նրա հայրենիքը գտնվում էին ողբերգական կացության մեջ, բայց միաժամանակ ճակատագիրը հույսեր էր առկայծում ավերակված հայրենիքի վերածնության եւ անկախության վերականգնման համար:

Հովհաննես Թումանյանն ու Անդրանիկը միմյանց ծանոթ էին դեռ դարասկզբից, եւ այդ ծանոթությունը կայացել էր իջեւանցի անվանի հայդուկ սեւքարեցի Սաքոյի միջնորդությամբ՝ Լոռիում (տե՛ս *Հր. Սիմոնյան*, Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երեւան, 1996, էջ 230): 1904 թ. Սասնո ապստամբության ճնշումից հետո Անդրանիկը մի պահ հանգրվանեց Արեւելյան Հայաստանում, որից հետո մեկնեց Եվրոպա:

Հովհաննես Թումանյանի եւ Անդրանիկի մտերմությունը խորացավ ու վերածվեց կայուն բարեկամության հետագայում՝ 1916–1918 թթ., երբ նրանք նաեւ հաճախակի հանդիպելու առիթներ ու հնարավորություններ ունեին:

Հայտնի է, որ 1914 թ. Անդրանիկը ժամանեց Կովկաս եւ Թիֆլիսում հանդիպեց ռուսական պետական ու ռազմական գործիչների հետ, ապա գլխավորեց հայկական առաջին գունդը, որը կամավորական ամենախոշոր զորամասն էր: Կամավորական առաջին գունդը մարտական հոյակապ ուղի անցավ 1914 թ. աշնանային ու ձմեռային մարտերից մինչեւ 1915 թվականի փառահեղ հաղթանակները: 1915 թ. փետրվարին Անդրանիկը սաստիկ հոդացավերի պատճառով կարճ ժամանակով եկավ Թիֆլիս՝ բուժվելու: Բայց ընդամենը տասն օր անց նա ստիպված էր վերադառնալ ռազմաճակատ: ➥ *էջ 7*

Ռաֆֆու «Դավիթ Բեկ» պատմավեպը

↩ էջ 3

Հյուսնի, սափրիչի, սափրիչի աշակերտ վիրաբույժի երեւույթով Դավիթ Բեկի մարդիկ ծպտյալ թափանցում են բերդ: «Սափրիչը հալիձորցի տեր Ավետիքն էր, Դավիթ Բեկի ամենաքաջ զորապետներից մեկը» (էջ 316), նրա աշակերտը հայր Խորենն էր, հյուսնը՝ Ստեփանոս Շահումյանը: Ճանապարհին ոչնչացնում են մելիք Ֆրանգյուլից Ֆաթալի խանին նամակ տանող սուրհանդակին, տեղեկանում նամակի բովանդակությանը, որով դավաճանն օգնություն էր խնդրում Դավիթ Բեկի դեմ: Թափանցում են բերդ, որտեղ կար նաեւ հայկական թաղամաս՝ մի հիսուն տուն: Բերդի տեր Ասլամազ-Կուլի խանը հայերին թույլ չի տալիս հեռանալ, պահում է որպես պատանդ:

Այստեղ է նաեւ հալիձորցի Մելիք Փարսադանի որդի՝ չափազանց հնարագետ ու ճարպիկ Բալի զորավարը: Մի հայ ընտանիքում Խորենի եւ տանտիկնոջ՝ Սառայի սիրո վերհուշն է՝ դարձյալ ենթարկված հայրենիքին ծառայելու գաղափարին: Բերդի հայությանն առաջնորդում է տեր Ավետիքը եւ տանում դեպի թուրքի թաղ: Իր քաջագործություններով հաղթանակ ապահովում է նաեւ սպասուհի Փարիշանը, նա, ով հրդեհում է բերդը եւ ձեռք բերում թշնամու զինապահեստի բանալիները: Թուրքերը «Յա Ալի» են բղավում ու նետվում մարտի, հայերը՝ «Կեցցե՛ Դավիթ Բեկը»: Բերդում հրդեհներ, զինապահեստի գրավում, այլեւայլ հնարամտություններ... Հայերը կարողանում են թշնամուն սեղմել թե՛ ներսից եւ թե՛ դրսից ու ոչնչացնել: Թշնամին նաեւ ունեզրկվում է՝ ոչ միայն ռազմավարն է, այլեւ սարերում արածող հոտերն են, նախիրներն ու երամակները... Մաքրվում են նաեւ թուրքմենների վաչկատուն ցեղերի մնացորդները: Ռաֆֆին արդարացիորեն խիստ է թշնամու հանդեպ, որովհետեւ հոգեպես եւ նյութապես նրանք կեղեքել էին ժողովրդին, ոչ միայն սպանել հայրենասիրական ոգին, այլ նաեւ սնել, աճեցրել, բազմացրել դավաճանների: Այս հարցը հերթական անգամ քննարկման են ենթարկում սրբազանն ու Ասլամազ-Կուլի խանի վեզիրը եւ գթության ու անգթության հարցը հանգեցնում կրոնների բարոյախոսության տարբերություններին: Թեեւ հիմա հայ քրիստոնյաները գիտակցել են, որ գութն այդ գազանների համար չէ, բայց Բեկը, անսալով վեզիրի աղաչանքներին, ասում է. «Ես կհրամայեմ դադարեցնել կոտորածը, բայց բերդը պետք է քանդվի» (էջ 449):



Նորից փայլատակում են հարեմի գեղեցկուհիները. այստեղ եւ սիրո հարցեր են, եւ խորամանկություններ են ու խարդավանքներ: Ասլամազ-Կուլի խանին բացատրում են փոխադարձ սիրո հմայքն ընդդեմ բազմակնության, որ նշանակում է «Կինը բողոքում էր բռնության դեմ» (էջ 389): Խանը մի կերպ փախչում է Բեկի ազատարարներից, բայց ուշքումիտքը կանանոցի կողմն է: Գիտակցում է, որ կանանոցն իր արժանապատվությունն է: Գերի չընկնելու համար խանն իջնում է իր իմացած գաղտնի ծակուռներից մեկի մեջ եւ իր հետ մեկտեղ պայթեցնում կանանոցը:

Դեռ կար մելիք Ֆրանգյուլը, որ Երիցվանիկ ավանում էր: Ասում էին նաեւ Արծվանիկի մելիք Ֆրանգյուլ: Դավիթ Բեկի համբավը նրան հանգիստ չէր տալիս: Ֆաթայի խանից Բարգուշատի մելիքությունն ստանալուց հետո նրա հետ կապն ամուր պահելու համար աղջկան կնության է տալիս նրա եղբորը՝ Աղասի խանին: Դրանից հետո Ֆաթալի խանի մոտ մելիք Ֆրանգյուլն ստանում է վեզիրի պաշտոն:

Ֆաթալի խանի, նրա հետ մեկտեղ նաեւ մելիք Ֆրանգյուլի դեմ գնում է զորավար Թորոսը. վերջինիս հետ էին Ստեփանոս Շահումյանն ու Բալի զորապետը: Ռաֆֆին դավաճան մելիքի մասին նույնիսկ այսպիսի խոսքեր է գրում. «Մելիքը բնավորությամբ բարի մարդ էր, բայց սաստիկ փառասեր: ....իբրեւ հայ, նա ցանկանում էր Հայաստանի բարին, ցանկանում էր, որ այդ երկիրը ազատ լինի, բախտավոր լինի, ցանկանում էր, որ նա ունենար իր հայ իշխողը, բայց այդ իշխողը լինի ոչ այլ ոք, բայց՝ միայն ինքը» (էջ 455): Նա ուրացել էր հավատը, բայց ո՛չ մահմեդական էր, ո՛չ քրիստոնյա, նրա իրական հավատը մերկ շահն էր ու փառքը: Ներկայացնում է մելիքի ընտանիքը. կինը մահացավ այն տարի, երբ նա մահմեդականություն ընդունեց, հետո չի ամուսնանում, ունի երկու տղա՝ Հախին, որ հորից առանձին ընտանիքով ապրում է գյուղում, եւ Մկրտումը, որն ապրում է հոր հետ: Երկու որդիներն էլ պահել են քրիստոնեական հավատը:

Հետաքրքրական է մի նրբություն՝ խաները կնասեր են, իսկ մելիքների կյանքում, այն էլ մահմեդականություն ընդունած մելիքների, որ բազմակնության հնարավորություն է, կին ասածը եղած-չեղած՝ նույն բանն է: Այստեղից՝ մելիքների արժանապատվության պակասը, որովհետեւ կնոջ ներկայությունը նաեւ կնոջ պատիվը պահելու արվեստ է:

Դավիթ Բեկի ուժն ու ռազմական հաջողությունները տեսնելով՝ մելիք Ֆրանգյուլն անգամ մտածում է անցնել նրա կողմը: Տատանումների ու տվայտանքների մեջ վիճակ է գցում, որը դուրս է գալիս հօգուտ Ֆաթալի խանի: Իր հերոսի մեջ դրական հատկանիշներ նշելն ահա նրա այս տատանումների համար էր, ըստ որի՝ նա կարող էր նաեւ Դավիթ Բեկի զինակիցը լինել, եւ այդ դեպքում ոչ մի պարսիկ կամ թուրք վտանգ չէին ներկայացնի: Բայց ահա վիճակը դուրս է գալիս Ֆաթալի խանի օգտին:

Վերջինս այդ ժամանակ իր կանանոցով ապրում էր ամառանոցում, ինչն Արծվանիկից մեկ ժամվա ճանապարհի վրա էր: Մելիք Ֆրանգյուլն այցելում է նրան եւ նախագծում առաջիկա իրադարձությունների պլանը: Այստեղ է, որ նա խորամանկության հնարամտությամբ գերազանցում է ինքն իրեն: Բավական չէ, որ «տերտերով, ավետարանով» հավատարմության թուղթ է ուղարկում Թորոս իշխանին, այլեւ ինքն է ներկայանում իր ախոյանին, երդումներ տալիս, հայտնում իր «հպատակության հավաստիքը» (էջ 482), խոստանում իր 2000-անոց զորախմբով օգնել նրան ընդդեմ Ֆաթալի խանի: Իր կեղծիքը թե՛ նամակում, թե՛ անձնական հանդիպման ժամանակ եւ թե՛ Ֆաթալի խանի հետ ունեցած հարաբերություններով ոչ միայն երդումներով, այլ նաեւ ցուցադրականորեն այնպես է կազմակերպում, որ հավատան: Հավատ ներշնչելու համար կազմակերպում է անգամ խանի զորքերի ձեւական հարձակումն իր ամրոցի վրա, որտեղից ինքը, իբր, մի կերպ է ճողոպրում: Այս ամենը փոխում են Թորոս իշխանի վերաբերմունքը մելիք Ֆրանգյուլի հանդեպ, եւ նրան թույլ է տալիս, որ գործով ապացուցի իր անկեղծ նվիրվածությունը: Թեեւ յուրայիններից մյուսներն ամենեւին չեն հավատում մելիքի փոխակերպմանը, բայց իշխան Թորոսի մեջ միամիտ մարդկայինն անհարկի գլուխ է բարձրացնում: Մինչդեռ դավաճանը մնում է դավաճան. կռվի թունդ պահին, երբ նախնական պայմանավորվածության համաձայն՝ պարսից զորքը նահանջում է, իսկ հայերը հետապնդում են նրանց, ահա այդ իրավիճակում հայերն ընկնում են շրջափակման մեջ. պարսից բանակը հետ է դառնում եւ անցնում հակահարձակման, մյուս գլխից հայերի դեմ հարձակման է անցնում մելիք Ֆրանգյուլը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արվեստի վաստակավոր գործիչ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԲԵՐԿՐԱՆՔԸ

↩ էջ 4

Բայց դա ապաշխարության մի կողմն է միայն, կամ ավելի ճիշտ՝ այն պետք է լինի գեթ մեկ ակնթարթ: Ապաշխարությունը պետք է զարդարվի ուրախությամբ ու սխրանքով, առանց որոնց անպտուղ է: Եվ այն, ինչը պետք է ապաշխարանք լիներ, վերածվում է մի անպտուղ զղջման, որը եւ սպանում է մարդու կենսաուժը՝ նրան հուզելու եւ նորոգելու փոխարեն: Երբ ինքներս մեր, Ավետարանի, աստվածային ուղու մասին խորհրդածելու արդյունքում, մեր վերին կոչմանն անհավատարիմ՝ կանգնում ենք մեր մեղքերին դեմ հանդիման, մեր սրտում, անշուշտ, ճնշող ցավ, ամոթ են առաջանում: Խոր հիասթափություն այն պատճառով, որ այդքան հեռու ենք այն ամենից, ինչպիսին կարող էինք լինել, այնքան տարբեր ենք այն [պատկերից], որը խորհեց Աստված մեզ արարելիս: Սակայն դա պետք է միայն ուղղորդի մեզ նոր կյանքով ապրելու: Այո՛, անհրաժեշտ է դադարել նախկին կյանքով ապրելուց, հայացքը համառորեն սեւեռել մեր կյանքի մութ կողմերին, մեր մտքերին, սրտի խորհուրդներին, մեր ցանկություններին, արարքներին ու վերաբերմունքին: Պետք է զննել խիստ ու սթափ հայացքով այնպես, ինչպես բժիշկն է զննում հիվանդին, կամ ինչպես մենք ենք գիշերը քայլելիս զննում ճանապարհը, որպեսզի չմոլորվենք, չընկնենք: Պետք է ուշադրություն դարձնել այն ամենին, ինչը տեսանելի է, եւ արդարամտորեն անդրադառնալ ամեն ինչին. պետք է մինչեւ վերջ ընդունել ամոթը, ցավը եւ չփնտրել արդարացումներ՝ ցավը մեղմելու, ամոթից չայրվելու համար: Միայն մեր ողջ ուժով, կարելվույն չափով սեփական ամոթը վերապրելով՝ կարելի է ազատվել ամենից, ինչից որ կախված է այն: Եթե միայն փորձենք որեւէ չափով, անգամ փոքր-ինչ մեղմացնել մեր մեղավորության իրողությունը, առավել ընդունելի դարձնել մեր մեղքը (ինչպես այնժամ, երբ ասում ենք ինքներս մեր մասին՝ «Մեղավոր եմ, ինչպես ամենքը», կամ՝ «Իսկ ուրիշ ինչպե՞ս կարող էի վարվել»), եթե միայն փորձենք խլացնել այդ ցավը, ապա ապաշխարանքն անհնարին կդառնա մեզ համար: Քանի որ միայն սարսափի, մեղքի մահացու ուժի գիտակցումով եւ ինքներս մեզ, ոչ թե ուրիշներին կամ Աստծուն անարժան լինելու պատճառով ունեցած ամոթով կարող ենք այդ գերությունից ազատվելու ուժ գտնել: Քանի դեռ «կրում ենք» այդ գերությունը, մնում ենք դրա մեջ: Սա է տարբերությունը մեր եւ այն սրբերի, որոնց վարքի մասին ընթերցում ենք՝ սկսած առաքյալներից, վերջացրած հավատքի ժամանակակից հետեւորդներով: Նրանք կարողացան մինչեւ վերջ խմել սեփական ամոթի բաժակը եւ մաքրեցին իրենց սիրտն ու գիտակցությունը, վերացրին իրենց ողջ էությունը տանջող սուր ցավը, որը վկայում էր, թե ով են իրենք: Բայց երբ տեղի ունենա այդ ամենը, պետք չէ ո՛չ հուսահատության մեջ ընկնել, ո՛չ կանգ առնել այդտեղ: Հիշե՛ք, թե ինչ է պատմում մեզ Ավետարանը. ինչպես էր Պետրոս առաքյալը պարծենում, որ անգամ մահվան կգնա Փրկչի հետ, որեւէ մեկը չի բաժանի իրեն Քրիստոսից: Իսկ այն բանից հետո, երբ Փրկչին բանտարկեցին եւ անօրեն դատ կազմակերպեցին, Պետրոսին մոտեցավ երիտասարդ աղախինը, որը չէր կարող նրան որեւէ կերպ վնասել՝ բացի խոսքից, եւ հարցրեց՝ արդյոք Պետրոսն էլ չի՞ եղել Հիսուս Նազովրեցու հետ: Եվ Պետրոսը երեք անգամ ուրացավ Տիրոջը: Եվ դուրս եկավ ու շրջվելով՝ հանդիպեց Հիսուսի հայացքին եւ դառնապես լաց եղավ:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
Աննա ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

Զմրուխտ վազերի սգերգը

Կիսվեց շոգ օգոստոսը: Շոգը ում՝ ում, բայց այն բնության հիանալի պարգեւն է խաղողի ջերմասեր վազի համար:

Արեւի, հողի, ջրի եւ այգեպան մարդու արարող ձեռքերի դաշնությամբ՝ զառ ու զմրուխտ այգիներում գոհար ողկույզը օրավուր հասնում, ոսկեշող հատիկները քաղցրորեն լցվում են արեւահյութով, բարձր, փքուն հողաթմբերի վրա բազկատարած վազերն էլ բերքով ծանրանում, խոնարհվում են:

Օգոստոսյան արգասավոր այս օրերին է Հայաստանյայց Առաքելական հնավանդ եկեղեցին պատշաճ արարողակարգով նշել Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը, կատարել խաղողօրհնեքի կարգը: Թեպետեւ անաստվածություն քարոզող խորհրդային կարգերը 1920–1930-ական թվականներին գործող շատ եկեղեցիներ փակեցին, սակայն Օշականի՝ հայոց սքանչելի եւ ազգապահ գրերն ստեղծող մեր մեծագույն երախտավոր Մեսրոպ Մաշտոցի սուրբ նշխարներն ամփոփող եկեղեցին այն սակավներից էր, որ գործեց մշտաբար:

....Այսօր՝ դեռ վաղ առավոտից, եկեղեցու զանգերի ղողանջները քաղցրալուր ելեւէջումներով թեւածում են Օշականի եւ շրջակա շեների, հուռթի այգիների, հանդ ու անդաստանի վրա, անուշորեն լցվում օջախները, անցնում սրտեսիրտ ու բոլորին հրավիրում Վերափոխումն Սուրբ Աստվածածնի տաղավար տոնի Ս. Պատարագին:

Տոնական վառ հագուկապով ուխտավորների հոծ հարահոսը եկեղեցի է տանում: Տիրամորը նվիրված հնագույն, ժողովրդին սրտամոտ արարչախորհուրդ սույն տոնը հայության քանի-քանի՜ սերունդ է վայելել վսեմական մի առանձնակի սիրով: Հիրավի՜ ժողովրդական տոն-տոնախմբություն: Բոլորն էլ ուրախ են՝ խնդումերես: Շատերի ձեռքերին լի սկուտեղներով ու զամբյուղներով նորահաս ալվան խաղող է: Ավանդապահ այգեպանները խաղողօրհնության ծիսակարգից հետո միայն կճաշակեն իրենց քրտնաջանչար աշխատանքի անուշ պտուղը...

....Ոսկեվազից շարվեշարան Օշական ճգվող հավատացյալների քարավանում են նաեւ Գեղամ Սարգսյանը, նրա մանկամարդ կինը, երկու ժիր մանկիկները: Ուռենու դալար շիվերից գործած զամբյուղով նրանք վաղահաս «Խալիլի», «Նազելի» եւ «Քիշմիշ» տեսակի խաղող են տանում եկեղեցի՝ օրհնելու: Ճանապարհին քաղցրավենիք, փուչիկ, սուլիչ, սարի ծամոն ու պես-պես ինչ-որ բաներ ցանկացած փոքրիկների հայրը սիրով գնեց մանրուք վաճառող չարչիներից՝ ավելի ուրախացնելով սիրասուն բալիկներին:

Օդը հագեցած է մարդկանց աշխույժ խոսք ու զրույցի, զվարթ ծիծաղի, երեխաների կայտառ ճիչերի, շվիների բազմաձայներով, իսկ բարձրում՝ մով երկնքում, նազով ճախրում են ճերմակաթեւ աղավնիները:

Ուխտավորների ուրախ քարավանը եկեղեցի հասավ, ուր գավիթում եւ ընդարձակ բակում հավատացյալները հազարավոր են: Երկար սպասված ցանկալի օր: Ուխտավայրում այսօր ծաղկահասակ, սիրավառ տղաների ու աղջիկների ինչքա՜ն նոր ծանոթություններ կլինեն...

Իշխան Վահան Ամատունու հնօրյա շիրմակոթողի շուրջ վառվռուն երիտասարդների մի կատարյալ աստղաբույլ է հավաքվել՝ շատերն արծաթյա նախշազարդ գոտի կապած, ազգային փողփողուն տարազներով: Գեղամի ընկերներն են նրանք, աչք էին պահում նրա գալուն, որպեսզի շուտով՝ արարողակարգերի ավարտին պես, բակում գովնդ բռնեն, եւ պարախումբը դարձյալ առաջնորդի իրենց «շենք ու շնորհքով գանգրահեր ախպեր-տղան»:

— Տղերք ջա՛ն, ներող եղեք, էսօր... չեմ պարի,— որքան հնարավոր է անհոգ ձեւանալով՝ ասաց Գեղամն ու հեռացավ՝ առանց որեւէ բացատրության:

Նա, իրոք, պարելու սիրտ չուներ. վիշտ կա նրա սեւակնած սրտում, օրհնելու բերած խաղողն էլ իր այգունը չէ, դրկիցից է խնդրել...

* * *

Արեւածագից առաջ Գեղամը զամբյուղը ձեռքին այգի իջավ՝ եկեղեցում օրհնելու համար խաղող ընտրելու: Սակայն, ի ցավ սրտի, տեւական ծարավից պապակած այգուց գեթ մեկ, գոնե մեկ ճուք չպոկեց. ընտիրը չգտավ, չկար... Սակավահյութ, մանրահատիկ ողկույզները դալուկ ու ցամաք չանչեր լինեին ասես: Ջրապապակ այգու խոտերին անգամ Աստծու տված առավոտվա շաղն էլ չէր իջել: Տեսնելու բան չէ՝ չորուտ դարձած հողը շոգից տեղ-տեղ այնպիսի լայն ու խոր ճաքեր է տվել, ուր կուդրակի ջրխմիկ բաց արմատներին մարդու դաստակն էլ կհասնի: Թեեւ վերջին ոռոգմանը հաստլիկ թմբերն իրենց սրսուռ հողե ծոցում, որ, ինչպես օազիսի աղբյուրից անապատի ծարավ ուղտն իր սապատի հյուսվածքներում, լի ու բոլ խոնավորություն էին ամբարել, վաղուց արդեն ջրազրկվել են իսպառ:

Իսկ ահա սահմանակից հարեւանների՝ ժամանակին ջրված այգիներում հյութառատ, եդեմական հակինթ ողկույզների հատիկների մեջ արեւի շողն է ցոլցլում, բեկբեկվում ծիածանափայլ...

...Մեղվաջան, ժրաժիր, հրաշալի այգեպան է Գեղամը: Վաղ գարունքվա այգեբացից սկսած մարդը ոսկու ամագ-քրտինք թափեց այգու վրա՝ էտեց-հատեց որթատունկի մատերը, նոր անդալիսներ քաշեց, փորեց-փխրեցրեց հողը, բուժեց ու խչմարներով հենակավորեց բերքաբեր վազերը եւ էլի շատ-շատ գործեր: Օրն ի բուն՝ արեւածագից մինչեւ մայրամուտ, կորովի այգեպանի նրա գլխի ճերմակ թասակը պիտի հարատեւ շարժվեր զմրուխտ վազերի անդաստանում: Եթե կապոցում մնացել է ճաշի հացից, կուլայում էլ սառը ջուր ունի, նա ինքնամոռաց կբանի մինչեւ մթնշաղի թանձրանալը: Ու դեռ ափսոսում է՝ «օրը էս ի՞նչ շուտ մթնեց»:

Ընտանիքն է նրա սրտի սերը, այգին՝ հոգու երգը, բոլորանվեր աշխատանքը՝ վասն խաղողի ու գինու... ➥ էջ 8

✠ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ

Աստվածաշնչյան բույսեր

Աստվածաշունչ մատյանը տարաբնույթ վկայությունների եւ հիշատակությունների մի անսպառ շտեմարան է. այն կյանքի բոլոր ոլորտներին վերաբերող գիտելիքներ է հաղորդում:

Ուշագրավ է, որ Սուրբ Գրքում անգամ հիշատակություններ կան տարատեսակ ծառերի եւ բույսերի վերաբերյալ: Դեռեւս Ծննդոց գրքում Արարիչն ասում է. *«Ահա ձեզ տվեցի ողջ երկրի վրա տարածված սերմանելի բոլոր բույսերի սերմերը եւ իրենց մեջ պտուղ սերմանելու սերմ պարունակող բոլոր ծառերը: Դրանք թող ձեզ համար սնունդ լինեն...»* (Ա 29):

Նույն գրքում՝ մեկ այլ դրվագում, նկարագրվում է, որ Ադամի ու Եվայի անհնազանդությունից եւ մեղանչումից հետո, Աստծու խոսքի համաձայն, երկիրը փուշ ու տատասկ պետք է աճեցներ նախածնողների համար, եւ նրանք պետք է սնվեին դաշտային բույսերով (հմմտ. Ծնն. Գ 18):

Համաշխարհային ջրհեղեղի պատումը ներկայացնող հինկտակարանյան հատվածում հիշատակվում է ձիթենու շյուղը. աղավնին Նոյի մոտ՝ տապան է վերադառնում երեկոյան՝ կտուցին ձիթենու մի շյուղ (Ծնն. Ը 11):

Ելից գրքում հիշատակվում է անկեզ մորենին: Այսպես՝ Աստվածաշունչ մատյանը վկայում է, որ Աստված Ինքն ընտրեց Մովսեսին՝ նրա միջոցով Եգիպտոսի փարավոնին Իր կամքը հայտնելու եւ իսրայելացիներին գերությունից ազատագրելու համար: Համաձայն Ելից գրքի՝ Մովսեսը հովվություն էր անում եւ արածեցնում էր իր աներոջ՝ Հոթորի՝ մադիանացիների քրմի ոչխարները. երբ նա ոչխարները տանում է անապատ եւ հասնում Աստծու լեռ՝ Քորեբ (կամ Սինայի լեռ), «Տիրոջ հրեշտակը երեւաց նրան մորենու միջից կրակի բոցով: Մովսեսը տեսնում էր, որ մորենին հրով վառվում էր, բայց չէր այրվում: Մովսեսն ինքն իրեն ասաց. «Գնամ տեսնեմ այս մեծ տեսարանը: Ինչպե՞ս է, որ մորենին չի այրվում»: Երբ Տերը նկատեց, որ Մովսեսը տեսնելու համար մոտ է գնում, մորենու միջից ձայն տվեց նրան ու ասաց. «Մովսե՛ս, Մովսե՛ս»: Սա ասաց. «Ի՞նչ է»: Աստված ասաց. «Մի՛ մոտեցիր այստեղ: Կոշիկներդ հանի՛ր քո ոտքերից, որովհետեւ այն վայրը, ուր կանգնած ես դու, սուրբ հող է» (Գ 1–5): Եկեղեցական մատենագրության մեջ այս դրվագի վերաբերյալ պահպանվել են տարաբնույթ մեկնություններ, որոնց կանդրադառնանք առանձին հոդվածով:

Հովնան մարգարեի գրքում ասվում է. *«Եվ Աստված հրամայեց դդմենուն, որը բարձրացավ Հովնանի գլխի վրա՝ նրան հովանի դառնալու, զովացնելու նրան եւ ազատելու իր տանջանքներից: Հովնանը չափից շատ ուրախացավ դդմենու համար»* (Դ 6): Այս վկայությունը թերեւս կարող է խիստ տարօրինակ թվալ, սակայն խոսքն իրապես բույսի որոշակի՝ դդմենի կոչվող տեսակի մասին է:

Դդմենին (Ricinus communis) արագ աճող բույս է եւ պատկանում է կաղանչանի կամ իշկաթնուկի ընտանիքին (Euphorbiaceae): Այս տեսակի բույսերը հիմնականում աճում են արեւադարձային գոտում. դրանց բարձրությունը գրեթե 13 մ է: Դդմենու տերեւի լայնությունը կարող է հասնել մինչեւ 1 մ-ի: Այս բույսի պտուղներից, որոնք արտաքինից ծածկված են փշերով, ստանում են բժշկության մեջ եւ արտադրական նպատակներով օգտագործվող յուղ (հայտնի է որպես «գերչակի յուղ»):

Առավել ուշ շրջանում մի շատ գեղեցիկ ծառատեսակ անվանվում է «հուդայածառ». այս իրողությունը, բնականաբար, առնչվում է նորկտակարանյան հայտնի դրվագին:

Հուդայածառը (Cercis) գարնանը՝ ծաղկած ժամանակ, մանուշակագույն փարթամ ծաղկեփունջ է հիշեցնում, տարածում է քաղցր բույր, ունի սրտաձեւ տերեւներ: Հայտնի է նաեւ «արճվան», «ցերցիս», «ծառ Հուդայի երկրից» անվանումներով: Պահպանված ավանդության համաձայն՝ Հուդան մատնությունից հետո հենց այս ծառի ճյուղից է կախվել: Աստվածաշնչում բույսը հաճախ այլաբանորեն խորհրդանշում է մարդուն (տես Սաղմ. ՂԱ 13–16): *«Նրանց որդիները նոր տունկի պես հաստատված են իրենց մանկությունից....»* (Սաղմ. ՃԽԳ 12), Եսայի մարգարեի գրքում էլ ասվում է. *«Եվ նրանք պիտի կոչվեն ազգ արդարության, տունկ՝ ի փառս Տիրոջ....»* (ԿԱ 3):

Սուրբ Գրքում «բույս» կամ «տունկ» բառերը գործածվել են նաեւ որեւէ մեկի ավանդած ուսմունքը, վարդապետությունը կամ հաստատած օրենքներն ու սովորույթները խորհրդանշելու իմաստով. *«Քանի որ դու թողեցիր քո փրկիչ Աստծուն եւ չհիշեցիր Տիրոջը՝ քո օգնականին, դրա համար էլ անհավատ տունկ եւ անհավատ սերմ պիտի տնկես....»* (Ես. ԺԷ 10): Այս իմաստով է նաեւ Մատթեոսի Ավետարանում ասվում. *«Ամեն տունկ, որ իմ երկնավոր Հայրը չի տնկել, արմատախիլ պիտի արվի: Թողե՛ք նրանց. կույրեր են, կույրերի առաջնորդ. երբ կույրն է առաջնորդում կույրին, սխալվում է, եւ երկուսն էլ փոսն են ընկնում»* (ԺԵ 13–14):

Նոր Ուխտում՝ Քրիստոսի առակներում, հաճախ է հիշատակվում այս կամ այն բուսատեսակը. այսպես՝ Մարկոսի (ԺԳ 24–30) Ավետարանում խոսվում է որոմների, իսկ Դ 30–34-ում եւ Ղուկասի (ԺԳ 18–21) Ավետարանում՝ մանանեխի հատիկի մասին:

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

Հայաստանը պետք է խոսի...

➥ էջ 4

1915 թ. փետրվարի 20-ին Անդրանիկի՝ ճակատ մեկնելու կապակցությամբ ողջերթի միջոցառում տեղի ունեցավ Թիֆլիսում, որտեղ ջերմաշունչ խոսքով հանդես եկավ Հովհաննես Թումանյանը: Նա հաղթանակ ու քաջություն մաղթեց հայ կամավորներին, իսկ Անդրանիկին անվանեց «Հայոց աշխարհին ազատություն բերող Գարիբալդի» (*Հ. Այվազյան*, Զորավար Անդրանիկ եւ Հովհաննես Թումանյան, Երեւան, 2004, էջ 13):

Հովհաննես Թումանյանի իմաստնությամբ դրոշմված վերոնշյալ բնութագրումը ճիշտ է եւ համապատասխանում է պատմական իրողություններին: Նույնիսկ կարելի է պնդել, որ Անդրանիկը մեզ համար շատ ավելին էր, քան Գարիբալդին՝ Իտալիայի համար: 1916 թ. մարտին Անդրանիկը կրկին Թիֆլիսում էր, որտեղ պիտի մաքառեր արեւմտահայ հազարավոր փախստականների տեղավորման ու ապահովության խնդիրների լուծման համար: Արեւմտահայ գաղթականների հոսքը Վրաստանի ապագա մայրաքաղաք, սոցիալական տագնապներից բացի, ստեղծել էր նաեւ քաղաքական առումով լարված իրավիճակ: Վրացական շրջաններում սկսել էին կեղծ լուրեր տարածել, թե հայերը նախապատրաստվում են Անդրանիկի գլխավորությամբ հարձակվել վրացիների վրա եւ տիրանալ Թիֆլիսին: Այս տրամադրությունները կանխելու եւ ճշմարտությունը տեղ հասցնելու նպատակով Հովհաննես Թումանյանը մամուլում հանդես եկավ «Ինչ են ասում» հոդվածով, որում խստորեն դատապարտում էր նման քարոզչություն անողներին: Բանաստեղծը հիմնավորում է, որ այդ կարգի լուրեր տարածողները սադրիչներ են, որոնք ձգտում են խաթարել հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամական հարաբերությունները: Հովհաննես Թումանյանը, վրացիներին դիմելով, ասում է, որ Անդրանիկը ոչ միայն նրանց հակառակ գործելու նպատակներ չունի, այլեւ «....եթե խումբ կազմելու լինի, ոչ թե ձեր դեմ գալու համար կկազմի, այլ ձեզի օգնելու, եթե երբեւիցե դուք էլ նեղության մեջ լինեք մի Էնվերի ձեռքից, ինչպես մեր ժողովուրդն է....» (*Հովհ. Թումանյան*, Երկերի ժողովածու, հտ. VI, Երեւան, 1959, էջ 224):

Վերոհիշյալ հոդվածում Հովհաննես Թումանյանը ներկայացնում է Անդրանիկին իր մարդկային, ազգային ու քաղաքացիական լավագույն գծերով ու հատկություններով: Նա մեջբերում է Զորավարի հետեւյալ հայտնի խոսքը. «Երբ իրիկունը գլուխներդ բարձին կդնեք, որ քնանաք, մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին: Այնուհետեւ մտածեցեք ձեր հարեւանի մասին՝ հայ լինի նա, թուրք լինի, վրացի լինի, ով կուզե լինի, եւ բարի մտածեցեք» (անդ, էջ 225):

Հովհաննես Թումանյանի ու Անդրանիկի ճանապարհները հատվեցին ճակատագրական 1917 թվականին, երբ նրանք երկու անգամ համախորհուրդ ուղերձներով հանդես եկան հայոց հայրենիքի համար ծանր ու ճակատագրական պահերին:

Առաջինը կապված է «Հայաստան» համահայկական պարբերականի հիմնադրության հետ: Առաջին աշխարհամարտի եւ Հայոց ցեղասպանության հետեւանքով

նոր՝ աննախադեպ իրավիճակ էր առաջացել: Մեծ եղեռնից մազապուրծ հարյուր հազարավոր գաղթականներ էին դեգերում Արեւելյան Հայաստանի ու Ռուսաստանի բազմաթիվ բնակավայրերում: Վերոնշյալ գաղթականների, որբերի հոգսերի, Արեւմտյան Հայաստանի ազատագրման հիմնահարցերի արծարծման համար Զորավար Անդրանիկը որոշեց ստեղծել նոր պարբերական, եւ այս ծրագիրը հնարավոր էր կյանքի կոչել իր հավատարիմ բարեկամի՝ Հովհաննես Թումանյանի աջակցությամբ:

Եվ ամենայն հայոց զորավարի, եւ ամենայն հայոց բանաստեղծի ջանքերով ասպարեզ եկավ «Հայաստան» օրաթերթը, որը պիտի դառնար հայ դատի խոսափողը: Անդրանիկ համարում կողք կողքի զետեղված էին Հովհաննես Թումանյանի եւ Զորավար Անդրանիկի ուղենշային հրապարակումները: Այդ օրվանից արդեն անցել է մեկ դարից ավելի ժամանակ, սակայն վերոնշյալ հոդվածները չեն կորցրել իրենց հրատապությունն ու արդիականությունը:

«Հայաստանը պետք է խոսի»,— այսպես էր վերնագրված Հովհաննես Թումանյանի նյութը, որում նա նշում է, թե Հայաստանի եւ Հայկական հարցի շուրջն ինչեր ասես չեն կատարվել, սակայն «....Հայաստանը գրեթե միշտ լռության է եղել դատապարտված ակամա: Ոչ նրա ցավն ենք կարողացել ճշմարիտ իմանալ, ոչ էլ ցանկությունը: Հայաստանը պետք է խոսի վերջապես....» («Հայաստան», Թիֆլիս, 16 ապրիլի 1917):

Նույնքան խորիմաստ ու ծրագրային էր Անդրանիկի ստորագրությամբ հոդվածը («Հայրենիքի վերաշինութիւնը»), որտեղ հստակ ու վճռական նշված է. «Մեր արեան հարցը արդէն դրուած է ազատութեան եւ համաշխարհային խաղաղութեան համար պատերազմող պետութեանց դիւանագիտական սեղանի վրայ.... Արեան հարցի հետ եւ այնքան խոշոր՝ դրուած է մեր ժողովրդի առջեւ եւ վերաշինութեան հարցը, որուն պէտք է լծուին մեր բոլոր ուժերը: Վերաշինութեան ծանրութեան տակ է, որ մենք բոլորս հաւաքականօրէն պէտք է մեր ուսերը տանք եւ որուն մէջ ոչ ոք պէտք է ինքզինքը դուրս հաշուէ» (անդ): Ահա այսպես սկսեց իր առաքելությունը «Հայաստան» պարբերականը: «Հայաստանը» խոսեց ժամանակի երկու ամենանշանավոր անհատների շուրթերով եւ գործողությունների ծրագիր առաջարկեց:

Հովհաննես Թումանյանն ու Անդրանիկը համայն հայության առջեւ հանդես եկան եւս մեկ անգամ նույն՝ 1917 թվականի վերջերին, երբ արդեն զգացվում էր թուրքական մոտալուտ արշավանքի շունչը: Այդ օրերին Անդրանիկն ամեն ինչ անում էր, որ շուտափույթ կազմավորվեն հայկական կանոնավոր զինված ուժերը եւ շտապ մեկնեն ռազմաճակատ:

1917 թ. դեկտեմբերի 22-ին «Հայաստան» օրաթերթում հրապարակվեց Անդրանիկի որքան խորիմաստ, նույնքան հուզախառով կոչը, որում ժողովրդական բոլոր ուժերին հորդորում էր պաշտպան կանգնել հայոց հայրենիքին. «Պաշտպանէք, չթողնէք, որ օսմանեան բանակը, օգտուելով պատեհութենէն, գրոհ տայ մեր վաղուայ մեծ շեմքի վրայ» (անդ, 22 դեկտեմբերի 1917):

Զորավարի խորին համոզումով՝ «Մեր ժողովուրդը կամ կապրի իր վերջին օրերը եւ կամ կգտնուի վաղուան ազատութեան նախօրեակին.... Հասած է ժամը վերջին մարտնչումի: Գալիք ազատութիւնը կպատկանի բոլորիս....» (անդ):

Զորավարի կոչը գերհուզական լիցքերով բաղադրիչներ ուներ, ինչը պետք է ոգեշնչեր հայ հասարակության լայն շերտերին: Ահա վերոնշյալ կոչի ամենաոգեշունչ հատվածը. «Եթէ հաւաքական կերպով չպատասխանես այս կոչին, եթէ պայծառ գիտակցականութիւն չունենաս հայրենիքի եւ փախստական ժողովրդի, բզկտուած մայրերու, բռնաբարուած հայ կոյսերու ներկայ սարսափելի կացութեան, եթէ դուն հասկացողութիւնը չունենաս ստեղծուած ծանր որպէի, այնժամ յետ առ ինձմէ հերոս անունը, զոր դուն ես տուած, եւ իրաւունք մի՛ ունենար իմ վրայ արտասուելու» (անդ):

Զորավարը բարոյական իրավունքը վաստակել էր այսպես՝ այս ոգով ու ոճով պահանջելու իր ժողովրդից. «Հասկացութեան, տրամաբանութեան, գործի եւ գործելակերպի ազգային մէկ ճակատ — ահա հրամայականը, ահա վերջին խօսքը» (անդ):

Զորավարի սույն կոչ-հորդորանքին անմիջապես արձագանքում է ամենայն հայոց բանաստեղծը: Մեկ օր անց՝ 1917 թ. դեկտեմբերի 23-ին, տպագրվում է նրա նամակ-արձագանքը՝ ուղղված Անդրանիկին, որում նշում է, որ ահավոր վտանգի առջեւ յուրաքանչյուր մարդ պետք է ընդհանուրի սեղանին բերի ինչ որ ունի եւ կարող է՝ թե՛ վերահաս վտանգը կանխելու եւ թե՛ բաղձալի խաղաղությանը հասնելու համար: Բանաստեղծը հպարտությամբ է նշում. «Ես չորս տղայ ունեմ, չորսն էլ երկրի կառավարութեան, Ազգային խորհրդի եւ քո տրամադրութեան տակ են, իսկ չորս աղջիկս էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին, ինչի որ ընդունակ կլինեն....» (անդ, 23 դեկտեմբերի 1917):

Բանաստեղծի անկեղծ խոստովանանքը Զորավարի եւ հայրենի ժողովրդի առջեւ չափազանց հուզիչ է հնչում. «Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ, հետեւաբար ոչինչ չեմ խնայել, միայն թէ կարողանանք բոլոր ազնիւ ժողովուրդների եւ ազատասէր հոգիների հետ յետ մղել վերահաս վտանգը եւ պաշտպանել ամենքիս սրբազան իրաւունքներն ու ազատութիւնը» (անդ):

1917 թ. դեկտեմբերի 29-ին «Հայաստան» պարբերականում հրապարակվեց պատասխան նամակ-արձագանքը՝ ուղղված Հովհաննես Թումանյանին, որում դրվատանքի խոսքեր են հնչում բանաստեղծի հայրենանվեր վարք ու բարքի վերաբերյալ. «Ես հրճուանքով կարդացի նամակդ, հասած է ժամը, որ բոլոր նմանին քեզի՝ տրամադրելի ընելով իրենց զաւակները եւ դրամը հայրենիքի պաշտպանութեան գործին: Պէտք է մոռնաք պահ մը գրիչը՝ փոխարինելով սուրին՝ ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մէջ միայն կծաղկի գեղարուեստի կեանքը....» (անդ, 29 դեկտեմբերի 1917):

Զորավարը հույս է հայտնում, որ հայ մտավորականությունը հետեւելու է Հովհաննես Թումանյանի օրինակին, որով պիտի դարբնվի հայոց սրբազան ազատությունը:

Ահա այսպիսի գործունեություն են ծավալել հայոց մտքի եւ բազկի մեծանուն վարպետները՝ Հովհաննես Թումանյանն ու Անդրանիկը, հայրենիքի համար ճակատագրորեն ծանրագույն պահերին:

Միով բանիվ՝ Հովհաննես Թումանյանի եւ Զորավար Անդրանիկի մտերմությունն ու համագործակցությունը հայ ազգային քաղաքական պատմության լուսավոր եւ հուզախառով էջերից են: Հայրենիքի համար դժնդակ պահերին նրանք հանդես են եկել միասին՝ իրենց ուսերին առնելով վիթխարի պատասխանատվություն ներկա ու գալիք սերունդների առջեւ: Նրանց կյանքն ու գործը, թողած դասերն ու պատգամները հայրենիքին անմնացորդ ու մինչեւ վերջ նվիրվելու լավագույն օրինակներն են:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Վրեժխնդրության պտուղը

Մի անգամ հովիվը վիրավորեց մի մարդու: Այս մարդն էլ չարացավ հովվի դեմ եւ որոշեց վրեժխնդիր լինել նրանից: Նա իր չար մտադրության իրագործման համար հատուկ օր ընտրեց եւ ուշ գիշերով սկսեց փոս փորել: Այդ փոսը փորելիս նա պատկերացնում էր, թե ինչպես է իրեն վիրավորող հովիվն ընկնում դրա մեջ եւ վնասվում:

Կամ, իր համար «վատագույն» դեպքում, հովվի ոչխարները կընկնեն այդ փոսի մեջ: Նա երկար ու ջանասիրաբար փորեց՝ երազելով վրեժխնդիր լինելու մասին եւ անգամ չնկատեց, թե ինչպես է փոսը հետզհետե ավելի ու ավելի խորը դառնում: Այս մարդը չնկատեց էլ, թե ինչպես լուսացավ. հանկարծ նա նայեց ծագող արեգակին եւ այդժամ միայն կարծես դուրս ելավ իր չարարար մտքերի հորձանուտից: Եվ որքա՜ն մեծ եղավ նրա զարմանքը, երբ տեսավ, որ այդ ընթացքում այնքա՜ն խոր փոս է փորել, որից ինքն էլ այլեւս չի կարող դուրս գալ:

Նախքան ուրիշի համար փոս փորելը, նույնիսկ եթե դա անում ես մտքում, պետք է հիշել հետեւյալը. փոս փորելու համար նախ դու ինքդ ես հայտնվելու դրա մեջ, քանի որ փորողն առաջինն է ոտք դնում փոսի մեջ: Եվ ինչ-որ մեկի վրա ցեխ շպրտելիս էլ նախեւառաջ հենց քո՛ ձեռքերն ես կեղտոտում....

«Ահավասիկ, ով որ անօրենություն երկնեց, չարիք հղացավ եւ անիրավություն ծնեց, նա փոս փորեց, խորացրեց, հենց ինքն էլ ընկավ այն փոսը, որ ինքը պատրաստեց....» (Սաղմ. է 15—16):

Պատրաստեց
Աննա ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

Ձմրուխտ վազերի սգերգը

➥ էջ 6

Խանդավառ էր նա թե՛ աշխատանքում եւ թե՛ խնջույքներում...

Հեկտարաչափ այգին, այգու հետ նաեւ վազի հանդեպ պաշտամունքի հասնող անհագ սերը նա տոհմիկ այգեգործ պապերից է ժառանգել. վազին, ինչպես իր մանկիկներին, միշտ գորովանք, խանդաղատանք... Թե որ այգաբացին սիրտն ուզել է մեկ-երկու ճութ սառը, ցողաթաթախ, շաղոտ-շողոտ խաղող վայելել, փարվել է նույն վազին ու երախտիքի խոսքեր շշնջացել՝ «էս ի՞նչ անուշ ի պտուղդ, մով ջան, ես քո էդ քոք ու բուսին մատաղ...»:

Դեռ երկու-երեք շաբաթ առաջ նրա սիրտը թրթռում, բերկրում էր, որ տարին բարելից է, չարաղետ կարկուտն այս անգամ վնաս չտվեց, եւ շուտով՝ աշնան այգեկութին, բարով-խերով 10—12 տոննա բերք կհավաքի, այն էլ՝ Հայաստան աշխարհի ամենաքաղցր՝ «Ոսկեհատ» («Խարջի») տեսակի խաղող: Իսկ հիմա՞... Ի՞նչ է՝ սատանա՞ն լսեց ուրախ սրտի բաբախը... Ողկույզի հյութալցման այս վճռորոշ օրերին, երբ օրը տարի է կերակրում, իր այնքան խնամած պապենական այգին աչքի առաջ ծարավից տոչորվել, թոշնել, մահանում է օր օրի, ժամ առ ժամ... Հիրավի, սիզիփոսյան աշխատանք եղավ արած-դրածը...

* * *

Կրակ է մաղվում Գեղամի գլխին, կարծր ապառաժի է հանդիպել. մայր առվի ջրի գործը վարողը՝ ջուրվար Թաթոյի Համոն, հակառակվել, այգու հասանելիք ջուրն այս շոգ ու կրակին չի տալիս... արդեն երեք շաբաթ:

...Եղավ, որ Գեղամը Սեւանի կողմերն իր պատվարժան քավորի հոգեհանգստին ու հուղարկավորությանը գնաց:

Գյուղից նրա բացակայելու նույն օրերին ջուրվար Համոն Չիլինգարենց ջրթողից սնվող այգիներին առատ ջուր բաշխեց ու այնպես ձգեց պնդօղակը, որ կաթիլ անգամ չէր ծնծնում: Հետո լրջադեմ, գործի տիրական պատվախնդրությամբ, ասես պետական բանկի գանձատունն է կապարակնքում, Համոն խոշոր ափերով տիղմացեխ սվաղեց ջրփակի թիթեղի հակառակ երեսին, վրան դրեց ջուրվարի՝ իր ինքնության խորհրդանիշ բազմանկյուն բանալու խոր դրոշմը (իր խոսքով՝ պեչատը), ապա գնաց մյուս թաղամասերին ջուր բաժանելու:

Վերջ, մինչեւ հաջորդ ջրտուքը որեւէ ուրիշ ձեռք չի հանդգնի նրա դրած դրոշմակնիքը խախտել, բանալ ջրփակը: Իսկ թե բան է, օրերից մեկ օր գտնվեր անհամբեր մեկը եւ գիշերը ինքնագլուխ բացեր ջրփակն ու ջուր գողանա՞ր, օ՜, ծանր կլիներ Համոյի պատիժը:

Առավոտվա ստուգայցին կնկատեր խախտված նշանը, կկատաղեր, կմռնչար ինչպես առյուծը ջունգլիներում եւ վայրի կենդանու հետքը տանող որսորդի կրքոտությամբ կգնար թաց առվով, կգտներ օրինախախտին, ու վա՛յ սրան... Դատաստանն ինքը կաներ. կհերստեր, կբղավեր, ձեռքի անբաժան երկաթե ծանր բանալին կիջեցներ նրա թիկունքին, տուգանել կտար ու դեռ ոխ կպահեր. անջուր թողնելով՝ կչորացներ նրա բանջարանոցն ու այգին:

— Իմ ասածն օրենք ի, իմ տրած պեչատը քանդողն էլ հլա մորուց չի ծնվիր,— բանալին վճիռ արձակող դատավորի պես բարձրացնում եւ ի սարսափ ջրօգտագործողների՝ հաճախ հոխորտում, հիշեցնում էր դաժանաբարո ջուրվար Համոն:

....Հավիտենական է ջրի խնդիրը: Հնում առասպելաբանում էին, թե ջրի ակունքներում դեւեր ու վիշապներ կան: Շատ գյուղացիների աչքում հիմա դեւն էլ, վիշապն էլ Թաթոյի Համոն է... Հիրավի, ազդեցիկ այր էր ջուրվար-ջրբաժանը հին գյուղում, քանզի նրա ձեռքում էին ջրի փակն ու բանալին: Իրական իշխանություն ուներ նա հողագործների վրա. ում այգու, արտի, բանջարանոցի ջուրը ժամանակին չհասցներ, վտանգելու էր նրա տարվա ապրուստը:

Գյուղի երեք ջրանցքներից գիշեր-ցերեկ ջուր բաշխող, բարի անուն թողած, «օղորմի»-ով հիշվող ջուրվարներ են եղել Գեւորգ Գյուրջյանը, Գերասիմ Ղարիբյանը, Միթեւանի Հրայրը, Սիրոյի Վազգոն, էլի ուրիշները: Համոն նրանց շարքում չկա...



Ջուրվարները, սակայն, որքան էլ արդարացիորեն բաժանեին բնության պարգեւ կենարար հեղուկը, այնուամենայնիվ, գյուղի՝ մանավանդ վերին երկու սակավաջուր ջրատարների վրա շոգ ամռանն անպակաս էին վեճերն ու ծեծկռտուքը: Ջրի պատճառով իրարից խռոված դրկիցներն Ամանորին հաշտվում էին, ապրում խաղաղ, մարդավայել մինչեւ... մինչեւ թեժ ամռան ոռոգման նոր շրջանը...

Եվ ամեն ինչ կրկնվում, դառնում էր ի շրջանս յուր...

Մայր առուն անհամեմատ ջրառատ էր, ուր ոռոգման խնդիրներ, վեճեր ընդհանրապես կարող էին եւ չլինել, սակայն... չէ՞ որ այստեղ ջրի գործը վարողը ինքը վեճեր հրահրող, կռվազան Թաթոյի Համոն էր... Չարաշահելով իր վերադասների՝ ջրպանների եւ գյուղական իշխանության վստահությունն ու հովանավորչությունը՝ նա տարեցտարի ավելի կամակոր, իր ասածի ու սանձարձակ էր դառնում: Նաեւ՝ ինքնիշխան...

Նրա մասին իզուր չէր վարժապետ Վարդան Սենեքերիմյանը սրախոսել, թե՝ «Ոռոգման շրջանում էս մեր գյուղացի Թաթոյի Համոն իրեն եգիպտական փարավոն Թութանհամոն է կարծում...»:

Այն հեռավոր օրը, երբ Համոն ջուրվար էր նշանակվել, գյուղում հարգված, իմաստախոս ծերունի, բիբլիսցի Բաղդասար ապերը շնորհավորել էր նրան ու բարեկամաբար ասել.

— Համո՛ տղա, մարդոց հետ պիտի աշխատիս. էնքան քաղցր չեղնիս, որ քեզ կըլլըցուն, ոչ էլ էնքան դառը, որ թըքըցուն...

Համոն գնալով դառնացավ ու դառնացավ... Ջրի որ հանգույցի մոտ աղմուկ ու վեճ կար, այնտեղ Համոն էր:

Բաղդասար ապերը նրան երկրորդ ու վերջին անգամ ասել էր.

— Տղա՛ Համո, հերիք չէ՞ կռիվ-ղալմաղալներ սարքիս.... Իմացիր, օր մը պատվասեր մեկը գլուխդ կփշրի.... Տղա՛, դու ջուրը մարդոց քաղցր խոսքով բաժնե, որ ծառի պտուղ լե անուշնա, համ էլ Աստված բարի գործերդ կտեսնի, քեզ լե ձագուկներ կուտա...

Համոն ականջալուր չեղավ, մնաց իր կերպի, իր պատյանի մեջ...

* * *

Վերադարձին Գեղամը մոտեցավ ջուրվարին, ասաց գուղից իր բացակայելու հարգելի պատճառը, մարդավարի խնդրեց, որ ծարավ այգուն ջուր տա:

Համոն... չհարգեց... Դեռ մտքում ուրախացավ, որ Գեղամի պես «մարդամիջի մարդը», հաջողակ «որսը» հիմա բռունն է: Այս մասին նա հաճույքով կիրազեկի կոլտնտեսության ղեկավարությանը, Գեղամի այգու ջուրը կձգձգեն, անելանելի վիճակի կհասցնեն, եւ նա ճարահատյալ «կոլխոզ կգրվի», ու նրան աչք կդնեն իր պես երիտասարդ ուրիշ ընտանիքներ:

— Չեմ տա՛,— հոխորտաց Համոն,— մինչեւ ճրի հերթի օրը ես իմ տրած պեչատը ոչ մե անհատ մարդու խմար չեմ քանդի:

Գեղամը տուն դարձավ: Նա մտքում ներեց ջուրվարին՝ մտածելով, որ Համոն տրամադրության մարդ է. «Երեւի էսօր քեֆը տեղը չէր», վաղը կամ մյուս օրը կստանա այգու հասանելիք ջուրը:

Գեղամի հաջորդ այցին Համոն բավական հանգիստ ու անհոգ ասաց.

— Քեղա՛մ տղա, ցավես եմ, որ քո գնացք էր, պոեզդ էր, էկավ-կնաց՝ տու ուշացար... Ճուրդ մնաց մեկել հերթին...

— Համո՛ ախպեր, ախր ի՞նչ պոեզ, ի՞նչ պեչատ... Ճրի փակն էլ, պեչատն էլ քո ձեռը չի՞, ասա մտքիդ ըլնի... Համո՛ ջան, օղորմի անցավորներիդ, աղեկ կանես՝ փեշիդ քարը թափես, ճուրս տաս, մեր խնդիրքը վերջանա,— թախանձագին տոնով խնդրեց Գեղամը:

Համոն էլի անդրդվելի, նույն անկարեկիցը մնաց:

— Խելքդ յո՞ւր ի... Ուրեմն, մեր հարազատ կոլխոզի էքստարի ճուրը փակեմ, քեզ պես անհատ տնտեսությանը տա՞մ... Ասիր եմ, խոսքիս տերն եմ. ճուրդ՝ մեկել հերթին,— անվրդով ասաց ջուրվարը, կտրուկ շուռ եկավ, որ Ակոբենց տանձենիների տակով անցնող խոխոջուն առվի ջրի հետ իջնի կոլտնտեսության մեծատարած այգեստանը:

Գեղամն առջեւը կտրեց.

— Էդ ընձի արդեն ձեռ ես առնելի, խա՞... Մեկել հերթին քո տված ճուրն էլ ընչիս ի պետք... Որ մեռելին ճուր տաս, կզարթնի՞,— զայրացավ Գեղամը:

— Լավ, կուզես քելե կոլխոզի գրասենյակ, բողոքի: Թող կարգադրեն՝ ճուրդ տամ,— ծածկամտորեն ասաց Համոն ու մեծ-մեծ լոքեր անելով՝ արագ հեռացավ:

Գեղամը մտազբաղ շփեց ճակատը: Նրա ականջներում դեռ ջուրվարի վերջին խոսքն էր՝ «Կուզես քելե կոլխոզի գրասենյակ...»:

Նրան արդեն իսկ պարզ էր, որ հենց Համոյի նախաձեռնությամբ, նրա «սարքած գործով» իրեն կոլխոզի գրասենյակ կամ որ նույնն է՝ դեպի թակարդ են ուղղորդում: Եթե գրասենյակ գնա, գիտե՝ այնտեղ շատ պատրաստակամ ասելու են. «Այ դու բարով, հազար բարին եկար, ընկեր Գեղամ Սարգսյան:— Սա քեզ թուղթ ու գրիչ, դիմում գրի, կոլտնտեսության անդամ կընդունենք, իսկ այգուդ ջուրը... հենց հիմա գնա ու ջրի...»:

Մինչդեռ գրասենյակ տանող ճամփան Գեղամի համար փակ է դեռեւս այն չարաբաստիկ օրվանից, երբ իր աչքերով տեսավ, թե ինչպես «անհավատ մի շանորդի», գյուղխորհրդի ու կոլտվարչության նախագահների հրահանգով, տասը աշխօր պարգեւավճարով, գյուղի Ս. Հովհաննես եկեղեցու գմբեթի հնադարյան խաչը ուժով տեղահանեց ու... նետեց ցած... Եկեղեցին կոլտնտեսության պահեստ դարձրին. դռները հավատացյալների առջեւ փակեցին, լուսամուտները՝ ճտատեր ծիծեռնակների ու տատրակ աղավնիների:

Գեղամի զգայուն սիրտը փոթորկվեց, ըմբոստացավ... Նույն միջոցին նա ուխտեց՝ «Չէ՛, կոլխոզ չեմ գրվի...»:

1930-ականների սկզբին Խորհրդային ամբողջ երկրով մեկ շարունակվում էր կոլտնտեսությունների կազմավորումը: Չնայած անդամագրումը հայտարարված էր՝ «կամավորության սկզբունքով», սակայն իրականում այն հաճախ պարտադրվում էր... Անդամագրվողը նորաստեղծ կոլեկտիվ տնտեսությանը՝ կոլխոզին, իր անձնական նյութական ներդրումն ու նպաստը պիտի բերեր՝ անհատույց հանձնելով հողատարածքներ, ընտանի կենդանիներ, գութանը՝ եզներով, իր իսկ աշխատուժը...

Գեղամի համար էլ էին «պահված» համակարգային ընդհատակյա խութեր ու որոգայթներ: Եթե նա անդամագրվեր կոլտնտեսությանը (եթե, իհարկե, անդամագրվեր...), ապա «հարազատ կոլխոզին» պիտի «նվիրեր» ծով քրտինքով մշակած այգին՝ առկա բերքով, որից միայն 1/6-րդ մասը կթողնեին իրեն, կամ՝ 103 թմբից 16—17-ը... Կոլխոզի մառան կտանեին նաեւ իր գինու-օղու կարասներն ու տակառները: Գեղամը կդառնար շարքային կոլտնտեսական կամ, ասենք թե, որպես միջնակարգ կրթություն ունեցող, կնշանակվեր բրիգադիր: Այս դեպքում էլ դժգույն ապագա էր սպասում նրան. մյուս կոլտնտեսականների հետ կմշակեր նաեւ... իր նախկին այգին, որի համար, որպես վարձատրություն, կստանար աշխօրեր՝ չնչին դրամ եւ ընդամենը կենսապահ բնամթերք...

Ծանր դիլեմայի՝ երկընտրության առջեւ է նա. կոլխոզ մտնի՝ ստանա ջո՞ւրը՝ փրկելով այգու եւ բերքի մի մասը, թե՞ չանդամագրվի, եւ այգին չորանա, վերջանա... Հապա պատի՞վը... Լինելու բա՞ն է՝ ինքը չորացնի իր սեր-վա՞զը... «Ախր այգեգործ պապերիս ոսկորները տեղում ժաժ կգան»: Նրա մտքով այն էլ էր անցնում, որ եթե անգամ գյուղից չբացակայեր, մյուսների պես ջրեր այգին, հավաքեր բերքը, միեւնույն է, իշխանությունը չէր հանդուրժի, որ իր ձեռքում մնար հեկտարանոց ընտիր այգին: Կառաջարկեին այն կամովին հանձնել կոլտնտեսությանը, իսկ հրաժարվելու դեպքում, որպես «պետության կուրսին չաջակցող կուլակ», «վնասարար» կամ նմանօրինակ այլ պիտակավորումներով խլելու էին այգին ու դեռ իրեն էլ դատապարտելու էին... Ստալինիզմի չարագույժ, ահասարսուռ ստվերն ամենուր էր...

Վարժապետ Վարդան Սենեքերիմյանն այս իրավիճակի առնչությամբ մի տեղ ասել է. «Կոնֆլիկտ է հասունացել, որի հանգուցալուծումն անխուսափելի է...»:

Շարունակելի

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 25.10.2022 թ.
Տպաքանակը՝ 1225